

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏՐԻՊՈԼԻՏԱՆԱԿԱՆ ՈՒ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

Համաշխարհային Ա. Պատերազմին անմիջապէս առաջ, Օսմանեան Կայսրութիւնը կը մղէ երկու պատերազմներ, որոնց պատճառով «ընդհանուր առմամբ, սակայն բառացիօրէն, օսմանցիներուն համար Համաշխարհային Ա. Պատերազմը կը սկսի 1912ին, որմէ ետք, միայն մէկ տարուան դադարով, քուրքերը յաջորդ տասը տարիներուն կը գտնուին պատերազմի մէջ»¹: Զոյգ Պատերազմները, իրենց արդիւնքներով շրջադարձային նշանակութիւն կ'ունենան թուրք քաղաքական մտածողութեան վրայ եւ այդ ձեւով ճակատագրական կ'ըլլան ինչպէս Օսմանեան Կայսրութեան յետագայ պատմութեան, այնպէս նաեւ արեւմտահայութեան համար:

ՏՐԻՊՈԼԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1911 Սեպտեմբեր 29ին² Իտալիա պատերազմ կը յայտարարէ Օսմանեան Կայսրութեան դէմ եւ կը յարձակի անոր ափրիկեան նահանգներէն Տրիպոլիտանիոյ (Լիպիա) վրայ: Իտալիոյ սանձազերծած պատերազմը զուտ գաղութատիրական պատերազմ մըն էր:

Պատերազմի հռչակման յաջորդ օրն իսկ վարչապետ Հաքքի փաշայի կառավարութիւնը կը հրաժարի: Պատերազմի յայտարարութիւնը կը զուգադիպի նաեւ իշխող կուսակցութեան՝ Իթթիհատ Վէ Թերաքքի (միութիւն եւ յառաջդիմութիւն) երրորդ համագումարի բացման նիստին (Սեպտ. 30): Համագումարը ինքզինք կը հռչակէ Ազգային Պաշտպանութեան Կոմիտէ եւ նախաձեռնութիւն կը վերցնէ՝ ընդդիմութեան հետ կազմելու համաձայնական կառավարութիւն մը: Այս նպատակով Իթթիհատի ղեկավարներէն Թալաաթի հանդիպումները ընդդիմութեան յայտնի դէմքերէն իշխան Սապահէտտինի հետ, արդիւնք չեն տար: Նոր դահլիճը ծրդ անգամ կը գլխաւորէ անկուսակցական Սալիտ փաշան:

Պատերազմի առաջին օրէն, արեւմտահայութիւնը իր բոլոր հատուածներով կը քննադատէ Իտալիոյ ծաւալապաշտ քաղաքականութիւնը եւ կը պաշտպանէ օսմանեան հայրենիքը: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀԾԴ) Արեւմտեան Բիւրօն, շրջաբերականի մը մէջ քննադատելէ ետք Իտալիան կը գրէ. «բոլոր օսմանցիները պարտաւոր են մէկդի բողոք իրենց ներքին վերքերը եւ առանց ցեղի թէ ազգի խտրութեան միաբանիլ, ապահովելու երկրի ներքին անդորրութիւնը եւ աջակցելու

կառավարութեան»³։ Քանի մը օր անց, դարձեալ ՀՅԴ Արեւմտեան Բիւրօն, 1911 Հոկտեմբեր 5 թուակիր իր «Օսմանցի Հայրենակիցներուն» յայտարարութեան մէջ, կոչ կ'ընէ ամրապնդել ներքին միասնականութիւնը, դադրեցնել հակակառավարական ելոյթները՝ հակառակ անոր որ 1908ին վերահաստատուած սահմանադրութիւնը իրմէ եղած ականակալութիւնները չէր արդարացուցած⁴։

Պատերազմին հանդէպ, արեւմտահայութեան մէջ կշիռ ունեցող կուսակցութիւններ՝ ՀՅԴի եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (ՄԴՀԿ) կեցուածքներուն վրայ ազդեցութիւն կ'ունենայ իր կառավարութեան գաղութատիրական քաղաքականութիւնը քննադատող Իտալիոյ Սոցիալիստ Կուսակցութեան կեցուածքը։ Սա այն դէպքն էր երբ պատերազմի ժամանակ երկրի մը սոցիալիստական կուսակցութիւնը, դուրս գալով հայրենասիրութեան դասական ըմբռնումներէն, կը քննադատէր իր երկրի իշխանութիւններուն վարած գաղութատիրական քաղաքականութիւնը։ Իտալիոյ սոցիալիստական շարժման յայտնի ղեկավարներէն Ամիլքար Չիփրիաննիի «Անկցի՛ Թագաւորը, Կեցցէ՛ Թուրքիան» յօդուածը, տպուած Ֆրանսայի սոցիալիստներու պաշտօնաթերթ L'Humanitéի մէջ, կը գտնէ մեծ ժողովրդականութիւն։ Կ.Պոլսոյ հնչակեան պաշտօնաթերթ Նոր Աշխարհը անդրադառնալով անոր, զրուատիքով կը գրէ Իտալիոյ եւ Եւրոպայի սոցիալիստներուն մասին, որոնք կը դատապարտէին «միջազգային պատմութեան մէջ չտեսնուած այս կողոպուտը»⁵։

Պատերազմի դաշտին վրայ սակայն, Օսմանեան բանակները, որոնք Տրիպոլիտանիոյ մէջ ունէին թոյլ ներկայութիւն մը միայն, կ'ենթարկուին շատ արագ պարտութիւններու։ Իթիհատական խումբ մը սպաններ, որոնց կարգին էնվէր եւ Մուսթաֆա Քեմալ, կը մեկնին Լիպիա՝ արար ցեղախումբերով - յատկապէս Սինուսի ցեղախումբին միջոցով — ժողովրդային ընդդիմութիւն կազմակերպելու համար։ Այս նախաձեռնութիւնը կու տայ սահմանափակ արդիւնք մը միայն։ Գրգռելու համար արար ցեղախումբերուն կրօնական զգացումները, սինուսիներու կրօնապետը Ճիհատ կը յայտարարէ քրիստոնեաներուն դէմ։ Այս լուրը լայնօրէն կ'արձագանգուի Կ.Պոլսոյ մէջ։ ՀՅԴ Կ.Պոլսոյ պաշտօնաթերթ Ազատամարտ իր ղեկավարութիւնը կը յայտնէ միջնադարեան այդպիսի գաղափարի մը հրապարակ նետուելուն առթիւ, եւ գտնելէ ետք թէ նման քայլ մը չի նպաստեր միջազգային հանրային կարծիքին մօտ թուրքիոյ վարկին, իր «Ե՛ւ Անօգուտ Ե՛ւ Վնասակար» խմբագրականին մէջ կը գրէ «Քափառական ցեղի մը կրօնապետէն չի կարելի սպասել քաղաքական հեռատեսութիւն։ Սակայն ամէն իրաւունք ունինք պահանջելու Պոլսի ղեկավար շրջանակներէն, մտաւորականներէն եւ բոլոր խելահաս հայրենասէրներէն, քիչ մը հեռատեսութիւն եւ զգուշութիւն»⁶։ Ազատամարտի այս միտքին Տրիպոլիտանիոյ շրջանի երեսփո-

խան Սատրք էֆենտին համաձայն չ'ըլլար ու թանհնի էջերուն մէջ կը գտնէ թէ սինուսիներու մասին Ազատամարտի գրածը անարգանք է օսմանցիներուն հանդէպ⁷։

Պատերազմի ընթացքին, կրօնական զգացումները միայն Տրիպոլիտանիոյ արաբական ցեղախումբերուն մօտ չէ որ կը գրգռուին, այլ՝ ամբողջ Կայսրութեան տարածքին։ Ազատամարտին յղած իր նամակին մէջ, նամակագիր Լ. Կ. Հինտլեան կը գրէ թէ Ռումելիահիսարի իթթիհատական ակումբին մէջ ներկայ եղած է իթթիհատի ղեկավարներէն Ապտուլ Ռաշիտ էֆենտիի դասախօսութեան, ուր ան ըսած է որ պատերազմին ժամանակ եթէ եւրոպական երկիրները յարձակին թուրքիոյ վրայ, ապա քրիստոնեաներուն հանդէպ իրենք կը գործեն «ինչպէս որ պէտքն է»։ Նամակագիրը կ'աւելցնէ. «ասկէ զատ, յարգելի հոճան ըրաւ կարգ մը խօսքեր՝ համիսլամական թոնով, որ անհամապատասխան գտանք այս երկրին ներքին քաղաքականութեան հետ։ Հայերս, որ ընդհանրապէս ջերմ վերաբերմունք ցոյց կու տանք դէպի Իթթիհատի, ցաւելով լսեցինք իր անունով խօսող այդպիսի բանախօս մը, երբ անյետաձգելի անհրաժեշտութիւն մը կը նկատուի համերաշխութիւնը զօրացնել այս ալլատարք երկրին մէջ»⁸։

Պատերազմի ամբողջ ընթացքին, ռազմական գործողութիւններուն իրենց մասնակցութիւնը կը բերեն օսմանեան բանակ զօրակոչուած հայ զինուորները։ Սա առաջին անգամն էր որ քրիստոնեայ զինուորը իր իսլամ հայրենակիցին կողքին կը մասնակցէր պատերազմի, որովհետեւ 1908ի սահմանադրութենէն առաջ քրիստոնեաները չէին զօրակոչուեր, այլ փոխարէնը կը վճարէին տուրք՝ պետէր։ Դասալքութեան որոշակի դէպքեր չեն արձանագրուիր։ 1911 Դեկտեմբերին, երեսփոխանական ժողովը կը վաւերացնէ օրէնք մը, որուն համաձայն բանակ կը զօրակոչուին 1883էն ետք ծնած բոլոր տղամարդիկ, իբրեւ պահեստի զինուորներ։ Սա կը նշանակէր թէ բանակ կը զօրակոչուէին նաեւ իրենց բանակային պարտադիր ծառայութիւնը 1901-1908ին կատարած տղամարդիկ մինչդեռ, այդ թուականներուն քրիստոնեաները բանակ չէին զօրակոչուեր, հետեւաբար՝ անոնք զինուորական կրթութիւն չունէին։ Այս կապակցութեամբ 1912 Մայիս 19ին Յովհաննէս Արշարունի պատրիարք հանդիպումներ կ'ունենայ պատերազմական նախարար Մահմուտ Շեւքէթ փաշայի եւ Ներքին Գործոց փոխնախարար Թալատթ փաշայի հետ եւ կը խնդրէ անոնցմէ 30-45 տարեկան հայերը ազատ կացուցանել զինուորական ծառայութենէն⁹։ Յաջորդ ամիս, հայերէ եւ յոյներէ կազմուած պատուիրակութիւն մը նոյն հարցով կը դիմէ վարչապետ Սայիտ փաշային¹⁰։ Սենին թերթը (որ կախակայման պատճառով կը փոխարինէր թանհնը), 1912 Հոկտեմբեր 16ի թիւին մէջ կը տեղեկագրէ թէ հայոց պատրիարքարանը սպառնացած է եկեղեցիները փակ պահել, եթէ 30-45 տարեկան զօրակոչիկներուն հարցին չ'ընդառաջուի¹¹։ Հոկտեմբերի վեր-

ջերուն, յունաց պատրիարքարանը կը տեղեկագրէ որ նորանշանակ վարչապետ Քամիլ փաշա պաշտօնապէս յայտնած է թէ 30-45 տարեկան քրիստոնեաները ազատ կացուցուած են զինուորական ծառայութեանէն¹² :

Բանակային ծառայութեան կողքին, հայերը կը մասնակցին նաեւ բանակին նիւթականն ու բարոյականը բարձրացնելու նախաձեռնութիւններու: Բանակին ի նպաստ կատարուած հանգանակութեան կը մասնակցի եւ այդ մասին ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյին «ուրախութեամբ» կը գեկուցէ 1909ի Ատանայի եղեռնին խորունկ վէրքէն դեռ չապաքինած Ատանայի ՀՅԴ Կոմիտէն¹³ : Վիեննայի մէջ տեղի ունեցած հակապատերազմական հաւաքի մը ընթացքին ելոյթ կ'ունենայ ՀՅԴ յայտնի դէմքերէն Միքայէլ Վարանդեան: Այդ օրերուն Պարսկաստանի սահմանադրական յեղափոխութեան մէջ արդէն հռչակ ստացած Եփրեմ խան (Դաւիթեան), էնվէր եւ Նիսիի պէյերուն յղած իր հեռագրին մէջ կը խոստանայ որ Ասթարպատի շրջանի խաղաղեցումէն ետք պիտի գայ ու օգնէ «հայրենիքին»¹⁴ : Մէկ այլ հեռագրի մէջ, Եփրեմ խան ցաւ կը յայտնէ որ Պարսկաստանի մէջ զբաղած ըլլալով չի կրնար գալ եւ «օգտակար ըլլալ օսմանեան հայրենիքին»¹⁵ : Նշենք թէ Եփրեմ արեւմտահայ չէր. ան ծնած է Գանձակ եւ օսմանեան երկիրը իր «հայրենիքը» նկատելու ոչ մէկ պարտաւորութեան տակ կը գտնուէր:

Իտալո-թրքական պատերազմի զինուորական վճռորոշ գործողութիւնները կը գուգադիպին սահմանադրութեան վերահաստատումէն ետք երեսփոխանական Բ. ընտրութիւններու թէժ քարոզարշաւին (Մարտ-Ապրիլ ամիսներ): Ընտրութիւնները հիմնականին մէջ իրար դէմ կը հանեն իշխանութեան վրայ գտնուող Իթթիհատը (որուն հետ ընտրական դաշինքի մէջ կը մտնէ ՀՅԴն) եւ ընդդիմադիր Հիւրիյէթ Վէ Իթիլաֆ (ազատութիւն եւ համաձայնութիւն) կուսակցութիւնը (որուն հետ ընտրական դաշինքի մէջ կը մտնէ ՍԴՀԿը)¹⁶ : Ընդդիմադիրները իրենց քարոզարշաւին մէջ կ'օգտագործեն պատերազմի ճակատներէն հասնող պարտութեան լուրերը եւ իշխանութիւններուն հանդէպ հրապարակ կը նետեն «Տրիպոլիտանիան կը ծախեն» մեղադրանքը: Այս կապակցութեամբ ՍԴՀԿ յայտնի դեկավարներէն Ստեփան Սապահ Գիւլեան իր «Անջատականութեան Զրոյցը» յօդուածին մէջ կը գրէ. «Իթթիհատին կարելի է, եւ պէտք է քննադատել, նրա պակասութիւնները, սխալները քօղազերծել, բայց ենթադրել անգամ թէ նա՝ որպէս կուսակցութիւն ընդունակ է լինել այս երկրի էն փոքրիկ մասը ծախել, - դա արդէն՝ անագնութիւնից աւելի՝ տմարդութիւն է»¹⁷:

Իթթիհատ ընտրական բացայայտ խարդախութիւններով ձեռք կը ձգէ երեսփոխանական ժողովին բացարձակ մեծամասնութիւնը: Նոր երեսփոխանական ժողովն ու Սայիտ փաշայի գլխաւորած կառավարութիւնը կը դիմագրաւեն արտաքին եւ ներքին լուրջ դժուարութիւններ¹⁸ :

Երեսփոխանական ժողովի առաջին նիստի օրը՝ 1912 Ապրիլ 12ին, Իտալիան ընդարձակելով պատերազմին ծիրը կը ռմբակոծէ Տարտանէլի օսմանեան ամբուլթիւնները եւ յաջորդ ամիս կը գրաւէ Եգէական Մովու Երկոտասան Կղզիները։ Ներքին ճակատին վրայ, Իթիհատի կամայականութիւններուն հանդէպ դժգոհութիւնը կ'աճի եւ բանակային ստորաբաժանումներ ապստամբական դրօշ կը պարզեն։ Յուլիս 17ին Սալիտ փաշայի կառավարութիւնը կը հրաժարի եւ նոր վարչապետ կը նշանակուի Ղազի Ահմէտ Մուխթար փաշան, որ իր ղազիճը կը կազմէ ընդդիմադիր եւ չէզոք տարրերով։ Սուլթանին եւ ծերակոյտին մօտ կատարած ջանքերուն շնորհիւ, Օգոստոս 4ին կառավարութիւնը կը յաջողի ձեռք բերել նորընտիր երեսփոխանական ժողովին լուծարման որոշումը։ Իշխանութիւնը կ'անցնի Իթիհատի ընդդիմադիրներուն ձեռքը։

1912 Հոկտեմբեր 17ին պատերազմը կ'աւարտի Օսմանեան Կայսրութեան եւ Իտալիոյ միջեւ կնքուած համաձայնագրով, ըստ որուն Օսմանեան Կայսրութիւնը կը կորսնցնէ Տրիպոլիտանիան եւ Երկոտասան Կղզիները։

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այն պահուն երբ օսմանեան վարիչները կը գտնուէին տրիպոլիտանական պատերազմն ու ներքին քաղաքական տագնապները դիմակայելու դժուարութիւններուն դիմաց, անդին, Պալքանեան Թերակղզիին վրայ կ'ուրուագծուէր Օսմանեան Կայսրութեան սպառնացող նոր վտանգ մը։ Այդ վտանգը ամբողջապէս անտեսանելի չէր։ Տակաւին 1912 Ապրիլին, երբ Արտաքին Գործոց նախարար Ասրմ պէյ Daily Chronicleին տուած հարցազրոյցին մէջ կ'ըսէր թէ «մենք այս պատերազմը կը նկատենք յարձակում մը քաղաքակրթութեան եւ մարդկային յառաջդիմութեան դէմ», հնչակեան գործիչ Գարեգին Կոզիկեան իր «Իրականութիւնը Ի՞նչ Կ'ըսէ» յօդուածին մէջ, ընդունելէ ետք թէ Իտալիոյ սանձազերծած պատերազմը զաւթողական է, կ'աւելցնէ. «Ասըմ պէյ թող գիտնայ, որ միայն Իտալիան չէ օսմանեան երկրին դէմ, այլ պալքանեան փոքր պետութիւնները արդէն սկսած են դաշնակցութիւն կազմել, որը անկասկած ուղղուած է Թուրքիոյ դէմ։ «Եւրոպական մահանգներու» մէջ երբ թնդանօթները գոռան, ոչ մէկ ապահովութիւն կայ, որ այդ թնդանօթները պիտի չթնդան նաեւ Յունաստանի, Սերպիոյ, Գարատաղի (Չեռնոգորիա կամ Մոնթէնեկրօ - Ե.Ճ.), Պուլկարիոյ սահմանագլխին վրայ»¹⁹։

Այս կանխատեսութիւնը տեղին էր։ 1912 Սեպտեմբեր 30ին, Պալքանեան Զինակցութեան երկիրները՝ Պուլկարիա, Յունաստան, Սերպիա եւ Չեռնոգորիա կը յայտարարեն ընդհանուր զօրակոչ։ Հոկտեմբեր 2ին անոնք Օսմանեան Կայսրութենէն կը պահանջեն 1878ի Պերլինի Պայմանագրին 23րդ յօդուածին եւ 1880 Յուլիս 5ին Օսմանեան Կայսրութեան,

Ռուսների պատուիրակութեան եւ մեծ տէրութիւններուն միջեւ կրնա-
քուած Մակեդոնիոյ մէջ բարեկարգումներ խոստացող պայմանագրին
գործադրութիւնները²⁰, գուիցերիացի կամ պելճիքացի ընդհ. կառավա-
րիչ մը Մակեդոնիոյ համար, շրջանային օրէնսդիր մարմիններ, տեղա-
կան ոստիկանութիւն եւ ընդհ. բարեկարգումներ մեծ պետութիւններու
հովանաւորութեան տակ: Նոյն օրն իսկ թուրք-պուլկարական սահմա-
նին վրայ տեղի կ'ունենան զինուորական առաջին բախումները, որուն ի
տես, ՀՅԴ «պատշաճ մարմինը» իր մասնաճիւղերուն կը հրահանգէ.
«Պալքանեան պատերազմը հաւանական կը թուի: Հայրենիքի սպառ-
նացող այս վտանգին առջեւ՝ կը հրաւիրենք ձեզ գործակցիլ բոլոր կու-
սակցութեանց եւ նպաստել տեղական անդորրութեան»²¹:

Հոկտեմբեր 4ին Իթիհատի կազմակերպութեամբ Կ.Պոլսոյ մէջ տե-
ղի կ'ունենայ ժողովրդային հաւաք: Ռազմատենչ լոգունգներով կայա-
ցող հաւաքին Թալաթի կողքին ելոյթ կ'ունենան Սապահ թերթի խմբա-
գիր Տիրան Քելէկեան, նախկին երեսփոխան Յակոբ Պոյաճեան եւ ՀՅԴի
կողմէ՝ Տոթթ. Կարապետ Փաշայեան: Հաւաքը կը վերածուի ցոյցի: Երբ
ցուցարարները կ'անցնին Արտաքին Գործոց նախարար Գարրիէլ Նորա-
տունկեանի տան մօտէն, Արտաքին Գործոց նախարարը կ'ողջունէ ցու-
ցարարները ու իր խօսքին մէջ կ'ըսէ. «Օսմանեան մեծ ազգը պիտի չթո-
ղու որ իր իրաւունքները ոտքի տակ երթան»²²: Իթիհատականները՝
Թալաթի եւ Իթիհատական երեսփոխան (աւելի ուշ նաեւ նախարար)
Պետրոս Հալաճեանի գլխաւորութեամբ ցուցարարներուն կը բաժնեն
«մենք պիտի ըլլանք յաղթողները», «մահ կամ Սոֆիա» լոգունգները
կրող գլխարկներ²³: Ռազմատենչ հաւաքներ կը կազմակերպէ նաեւ Իթի-
լաֆ: Ուսանողութեան կողմէ կազմակերպուած ցոյցերուն կը վանկար-
կուի «անկցի'ն բարեկարգումները, կեցցէ՛ պատերազմը» լոգունգը:

Ռազմատենչ այդ մթնոլորտին անդրադառնալով, հնչակեան գործիչ
Յակոբ Արծրունի (Աւետիսեան), իր «Պէտք է Շրջահայեաց Ըլլալ» յօդ-
ուածին մէջ, կը քննադատէ ցուցադրականութիւնն ու ամբոխավարա-
յին հայրենասիրութիւնը²⁴: Նոյն թերթին մէջ, Տիգրան Զաւէն (Զուգա-
սգեան) իր «Անկցի Պատերազմը» յօդուածով կը քննադատէ հարցերը
պատերազմով լուծելու սկզբունքը²⁵: Ազատամարտ եւս, իր «Մեծ Պե-
տութիւնները Վարագոյրին Ետեւ» խմբագրականին մէջ, հաստատելէ
ետք թէ պալքանեան «ռազմատենչ» կառավարութիւնները սուր բարձ-
րացուցած են յանուն մակեդոնացի իրենց ազգակիցներուն, հարց կու
տայ. «Ենթադրենք որ հնարաւոր է եւ իրաւացի այս յայտարարու-
թիւնը: Շատ լաւ. միթէ եւրոպական կառավարութիւնները չէի՞ն կրնար,
աւելի մարդկային եւ աւելի բնական միջոցներու կիրառութեամբ՝
ստեղծել այդ բարեկարգութիւնը Մակեդոնիոյ կամ օսմանեան պետու-
թեան որեւէ մէկ երկրամասին մէջ»²⁶:

Հոկտեմբեր 6ին, կառավարութիւնը կ'որոշէ գործադրութեան դնել Պերլինի 23րդ յօդուածն ու 1880ի Ռումելիի համաձայնագիրը: Յաջորդ օր, *Թանին* եւ *Իքտամ* թերթերը բարեկարգութիւններու անհրաժեշտութեան համաձայն կը գտնուին, սակայն կը գտնեն թէ «այդ պէտք է ըլլայ արգիլելու համար եւրոպական միջամտութիւնը: Բարեկարգումները պէտք չէ տեղի տան ինքնավարութեան եւ ապակեդրոնացման»²⁷:

Շատ հաւանաբար, կառավարութեան վերոյիշեալ որոշումը օսմանեան իրերայաջորդ իշխանութիւններուն խոստմնադրութ ընթացիկ մէկ քայլը նկատելով, պալքանեան երկիրները լուրջ ուշադրութիւն չեն դարձներ անոր եւ Հոկտեմբեր 8ին Չեռնոգորիան պատերազմ կը հռչակէ Օսմանեան Կայսրութեան դէմ: Յաջորդող օրերուն նոյն քայլին կը դիմեն գինակցութեան միւս երկիրները՝ Սերպիան, Յունաստանը եւ Պուլկարիան:

Հոկտեմբեր 17ին, Լոնտոնի մէջ Օսմանեան Կայսրութեան եւ Իտալիոյ միջեւ կը կնքուի խաղաղութեան պայմանագիր: Օսմանցիները զիջումներու կ'երթան նախագգալով պալքանեան աւելի մեծ վտանգը: Այդ նախագգացումը տեղին էր: Համաձայնագրի յաջորդ օրն իսկ, լայն ծաւալով կը սկսի Պալքանեան Ա. Պատերազմը:

Պատերազմի նախօրեակին, ռումանացի սոցիալիստներուն նախաձեռնութեամբ որոշուած էր Կ.Պոլսոյ մէջ կայացնել պալքանեան երկիրներու եւ Թուրքիոյ սոցիալիստական կուսակցութիւններուն միջեւ խորհրդաժողով մը: Պատերազմին պատճառով իշխանութիւնները այդ ժողովը կ'արգիլեն, երբ արդէն կարգ մը կուսակցութիւններու պատուիրակները Կ.Պոլիս հասած էին: Մէկտեղուած պատուիրակները կը բաւարարուին հրապարակելով «Պալքանեան եւ Փոքր Ասիոյ Աշխատաւոր ժողովուրդի Հանրային Կարծիքին» վերնագրով յայտարարութիւնը, որ «Թուրքիոյ եւ Պալքաններու Սոցիալիստներուն Յայտարարութիւնը» խորագրին տակ լոյս կը տեսնէ Սոցիալիստական Ինտերնացիոնալի բիւրոյի պաշտօնաթերթ *Պիւլեթին*ի 1912ի 9րդ թիւին մէջ²⁸: Յայտարարութիւնը, որ կը կրէ Սալոնիկի Աշխատաւորական Ֆետերացիայի, Ռումանիոյ Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութեան, ՍԴՀԿԻ, ՀՅԴԻ եւ Պաղեստինի Սոցիալ-Դեմոկրատ Բանուորական Հրեայ Կուսակցութեան ստորագրութիւնները, պատերազմին հիմնական պատճառը կը նկատէ օսմանեան իշխանութիւններուն վարած ազգայնամոլական եւ կեդրոնաձիգ քաղաքականութիւնը: Յայտարարութիւնը կը գտնէ որ պատերազմին արդիւնքը ինչ որ ալ ըլլայ՝ պիտի ըլլայ ի վնաս ժողովուրդին: Որովհետեւ եթէ պալքանեան երկիրները յաղթեն, ապա անոնք պիտի դառնան դրամատիրական մեծ տէրութիւններուն թիրախը եւ դարձեալ կորսնցնեն իրենց անկախութիւնը: Եթէ Թուրքիան յաղթանակէ՝ ապա, տարածաշրջանին մէջ պիտի աճին ազգայնական մոլեգնութիւններն ու քաղաքական ճնշումները: Յայտարարութիւնը կը նշէ նաեւ որ օսմանեան իշ-

խանութիւնները Ռուսիոյի եւ Անատոլիայի մէջ միայն թշուառութիւն, տգիտութիւն, գաղթականութիւն, աւազակութիւն եւ հաւաքական ջարդեր յառաջ բերած են, որոնք օտար միջամտութեանց եւ պատերազմներու պատրուակ կը ծառայեն: Սոցիալիստները Թուրքիոյ մէջ տիրող կացութեան որպէս լուծում կ'առաջարկեն ազգային մշակութային ինքնավարութիւնը, տեղական ինքնակառավարումները, համեմատական ընտրութիւնները, հողային բարեկարգումները, հարկային դրութեան բարենորոգութիւնը եւ քաղաքական գործունէութեան ազատութիւնը²⁹:

Պատերազմի առաջին օրէն, օսմանեան բանակները ռազմաճակատին վրայ կը կրեն ծանր պարտութիւններ: Հոկտեմբեր 28ին պուլկար բանակը կը հասնի Էտիրնէ (Ադրիանուպոլիս): Յաջորդ օր Ահմէտ Մուխթար փաշայի կառավարութիւնը կ'իյնայ եւ գայն կը փոխարինէ անգլիասէր նկատուող Քամիլ փաշայի կառավարութիւնը, որ հակակառավարական շարժումներու առաջը առնելու համար կը ձեռնարկէ Իթթիհատի գործիչները, որոնց շարքին՝ Թալաաթ փաշան: Իթիլաֆական իշխանութեան մօտիկ կանգնած Ճումհուրիյէթ թերթը, Թալաաթի ձերբակալման լուրը կը համարէ իշխանութեան հասցէին հնչող զրպարտանք եւ լուրը հաղորդող Ազատամարտը կը մեղադրէ ազգային դաւաճանութեան մէջ: Ազատամարտ կը պատասխանէ թէ լուրը ինք չէ որ առաջին անգամ տուած է, այլ իր կարգին քաղած է այլ աղբիւրէ³⁰: Նոյեմբեր 8ին յունական բանակը կը գրաւէ Սալոնիկը:

Այն պահուն երբ Էտիրնէի շուրջ ընթացող կռիւններուն թնդանօթի ձայները կը լսուէին Կ.Պոլիս եւ մեծ տէրութիւնները իրենց դեսպանատուները պաշտպանելու համար նաւազներ ցամաք կը հանէին, ՀՅԴ յայտնի դէմքերէն է. Ակնունի (Խաչատուր Մալումեան) իր «Արեւելեան Համադաշնակցութիւնը - Մեծ Երագի Սկիզբը» առաջնորդող յօդուածին մէջ հարց կու տայ թէ արդեօք ճիշդ չէր ըլլար բախտը պալքանեան դաշնակցութեան հետ կապել ու թիւրք, հայ, արաբ, յոյն եւ քիւրտ միասնաբար արեւելեան դաշնակցութիւն կազմել. «Պալքանեան այսօրուան դաշնակցութեան եւ փոքր ասիական վաղուան դաշնակցութեան միացումը, մէկը իբրեւ դրօշակակիր եւրոպական քաղաքակրթութեան, միւսը իբրեւ յառաջապահ ասիական վերածնութեան: - Ահա մեծ երազը, երազների երազը»³¹ կ'եզրակացնէ Ակնունի:

1912 Դեկտեմբերէն 1913 Յունուար, պատերազմող կողմերուն միջեւ Լոնտոնի մէջ տեղի կ'ունենան հաշտութեան բանակցութիւններ: Վէճերը առաւելաբար կը կեդրոնանան Էտիրնէ քաղաքին պատկանելութեան շուրջ: Յունուար 13ին, մեծ տէրութիւններու Կ.Պոլսոյ դեսպանները հաւաքական յուշագրով մը Բ. Դրան կ'առաջարկեն Էտիրնէն յանձնել Պուլկարիոյ: Այս անգամ Իթթիհատին հերթն էր իշխանութիւնները «Էտիրնէն կը ծախեն»ով ամբաստանելու համար: Յունուար 23ին, գաղտնօրէն եւ լաւապէս կազմակերպուած պետական հարուածով մը Իթթիհատ կը

վերադառնալ իշխանութեան: Էնվէր փաշայի գլխաւորութեամբ սպանե-
րու խումբ մը մուտք կը գործէ Բ. Դուռ. անոնք կը սպաննեն Պատե-
րագմական նախարար Նազիմ փաշան եւ զէնքի սպառնալիքի տակ
վարչապետ Քամիլ փաշային կը ստիպեն ստորագրել հրաժարական՝ որ
շատ շուտով կը վաւերացուի սուլթանին կողմէ: Նոր դահլիճը կը գլխա-
ւորէ Իթթիհատի ամբողջական զօրակցութիւնը վայելող անկուսակցա-
կան Մահմուտ Շելքէթ փաշա: Կատարուած պետական հարուածին կա-
պակցութեամբ, Ազատամարտ որ այդ շրջանին կախակայուած ըլլալով
լոյս կը տեսնէր Ազդակ անունով, իր «Պիտի Դատուիս, Ինչպէս Որ Դա-
տես» խմբագրականին մէջ ցաւ կը յայտնէ որ Քամիլ փաշային նման
«անկեղծօրէն ազատական եւ անբասիր անցեալի ու անկախ նկարա-
գրի տէր» պետական գործիչ մը այս ճակատագրին արժանացաւ ու կ'ա-
ւելցնէ. «Եթէ իրացնէ՝ Իթթիհատ՝ իր կրած պետական ու կուսակցա-
կան այնքան մեծակորուստ ձախողանքներէ ետք ալ, պիտի չլքէ հին
գործելակերպը, - չենք վարանիր ըսելու իրեն ալ, ինչպէս ըսած ենք
միշտ, եւ ինչպէս որ այս րոպէին կ'ըսենք տապալող նախարարու-
թեան. - պիտի դատուիս, ինչպէս որ դատես»³²:

Իթթիհատ իշխանութեան կը վերադառնայ պատերազմը շարունա-
կելու եւ զայն իր յաղթական աւարտին հասցնելու խոստումներով: Լոն-
տոնի մէջ բանակցութիւնները կ'առկախուին եւ կողմերը կը վերադառ-
նան զէնքի լեզուին: Իթթիհատի առաջին մտահոգութիւնը կ'ըլլայ բարձ-
րացնել ժողովուրդին բարոյական կորովը, կազմակերպել թիկունքը եւ
բանակը համալրել մարդկային ու զինական նոր միջոցներով: Այս նպա-
տակին համար, Յունուար 31ին Օսմանեան Համալսարանին մէջ տեղի
կ'ունենայ ընդլայնուած խորհրդաժողով, որուն կը մասնակցի 1500 հո-
գի: Հայրենասիրական թունդ ճառերէ յետոյ իթթիհատականները հրա-
պարակ կը նետեն իրենց համագումարին մէջ որոշած Մուտաֆաայա
Միլլիյէ Ճեմիյէթիի (Ազգային Պաշտպանութեան Կոմիտէի) գաղափարը:
Ազատամարտ իր «Ազգային Ինքնապաշտպանութիւնը» խմբագրակա-
նին մէջ կը քննադատէ ԱՊԿի կազմութեան ձեւը, գտնելով որ անոր նա-
խաձեռնութիւնը միայն մէկ կուսակցութեան կը պատկանի մինչ այլ
կուսակցութիւններ եղած են միայն հետեւողի դերին մէջ. թերթը կը գրէ
որ այս քայլը պատերազմը վերսկսելու նախապատրաստութիւն է.
«հա՞րկ է վերսկսիլ պատերազմը, հա՞րկ է նոր ռիսկեր ընել» հարցին
պատասխանելու համար, թերթը կը գտնէ թէ այդ հարցին շուրջ պէտք է
բոլոր կուսակցութիւնները խորհրդակցէին³³: Իր կարգին ՀՅԴ ղեկա-
վարներէն Ատոմ (Յարութիւն Շահրիկեան), իր «Անշեղ Ուղին» յօդուա-
ծին մէջ հաւասարապէս կը քննադատէ Իթթիհատն ու ընդդիմութիւնը,
որոնք պատերազմի փողը հնչեցուցին առանց անոր հետեւանքներուն
համար պատասխանատուութիւն զգալու եւ առանց այդ մասին ազգա-
յին փոքրամասնութիւններուն կարծիքը առնելու³⁴:

ԱՊԿԻ Գործադիր Յանձնախումբին մաս կը կազմեն Շերիֆ Ալի Հայտար (նախագահ), Թալաթ, Ահմէտ պէյ (էնվէրի հայրը), իշխան Սապահէտին, Ալի Հայտար պէյ (Միտհաթ փաշայի որդին), Պ. Հալաճեան, Վարդգէս (Սերենկիւլեան) եւ ուրիշներ: Յատկանշական է որ ՀՅԴԻ յայտնի դէմքերէն եւ էրզրումի երեսփոխան Վարդգէս Յունուարի սկիզբը Ազատամարտին մէջ գրած իր մէկ յօդուածին համար հակաթիֆիզատական իշխանութեան կողմէ ձերբակալուած եւ երկու ամսուան բանտարկութեան դատապարտուած էր. (երեսփոխանական ժողովը լուծուած ըլլալով Վարդգէս չէր վայելեր երեսփոխանական անձեռնմխելիութիւն): Հայկական ծնունդը իր ընտանիքին հետ անցընելու համար ան յատուկ արտօնութեամբ ազատ արձակուած էր ու ապա այդ արտօնութիւնը երկարաձգած...: Գործադիր Յանձնախումբին կողքին կը ստեղծուին նաեւ այլ յանձնախումբեր. Նուիրահաւաքի Յանձնախումբին մաս կը կազմէ յայտնի վաճառական Իրրիանոս էֆենտին (Յանձնախումբի աշխատանքներուն կ'օժանդակէ Գրիգոր Զօհրապ), Հիւանդանոցային Յանձնախումբին կ'անդամակցի Տոքթ. Ատիլեան, Քարոզչական Յանձնախումբին՝ Տիրան Քելէկեան եւ Բիւզանդ Քէչեան: ԱՊԿԻ տարբեր շրջաններու մասնաճիւղերուն կ'օժանդակեն Հայ Կարմիր Խաչի մասնաճիւղերը³⁵: Նուիրահաւաքի աշխատանքներուն անդրադառնալով, Սապահ Գիւլեան իր «Փաստեր եւ Իրողութիւններ» յօդուածին մէջ կը գրէ. «բացի իր վրայ ծանրացած խոշոր հարկերից՝ հայը առատաձեռնօրէն օգնած է «նաւատորմի» զօրացմանը եւ, մասնաւորապէս, ներկայ պատերազմի առթիւ բացուած նուիրատուութեանց (իյանէ) եւայլն: - Այնտեղ, ուր թուրք աղան, պէկը, փաշան, ունետը 1ով, 5ով է տուել, հայը 10ով, 20ով է առաջ անցել: Այդ բոլոր զոհաբերութեանց ժամանակ՝ համայնաւարած ջարդի երկիւղը նրա գլխի վրայից մի օր պակսե՞լ է, տիրողը շարունակ իր սուրը չի՞ շողացրել նրա աչքին»³⁶: Աւելի ուշ, նոյն հեղինակը, իր մէկ այլ աշխատութեան մէջ, դժգոհանքով կը նշէ թէ ինքնապաշտպանական գործին դժկամութեամբ մասնակցող հայ մեծահարուստները «Պալքանեան Պատերազմի ատեն՝ մի քանի ժամուայ մէջ, 30 հազար ոսկիով պատասխանեցին Իթթիհատի բացած «ազգային հանգանակութեանը»: Յայտնի վաճառական Ի-ը 10 հազար ոսկի թափեց սեղանի վրայ, հայ եւ թուրք ժողովականների առաջ, օսմանեան համալսարանի մէջ»³⁷:

Պատերազմական ծախսերուն համար կատարուած նուիրահաւաքին հայութեան յօժար մասնակցութենէն դժգոհ հնչակեան ղեկավարին այս կեցուածքէն տարբեր էր ՀՅԴԻ կեցուածքը: Բանակի կարիքներուն համար «նուիրահաւաք»ի անուան տակ կը բռնագրաւուին բոլոր ձիերն ու ջորիները, կը գրաւուին նաեւ Պատրիարքարանի գոյգ ձիերը: Արշարունի պատրիարք, խնդրագրով մը կայսերական ախոռէն երկու ձիեր կը

խնդրէ. խնդրանքը կը բաւարարուի: Թրքական մամուլը այս դէպքը կը ներկայացնէ որպէս հայութեան հանդէպ բարի տրամադրութեան արտայայտութիւն: Ազատամարտ կը գրէ թէ իրենք դէմ են արտօնեալ դասակարգերու գոյութեան եւ «Պատրիարքը կամ պատրիարքարանը չէր որ պիտի զլանային հայրենիքին պէտք ունեցած ձիերը տալ: ...Հայ ազգը ինքզինքը բացարձակապէս անպատուրուած կը զգայ այդպիսի շնորհներ խնդրելով եւ ստանալով»³⁸: Այլ առիթով մը, Ազատամարտ իր «Ո՞վ Պիտի Հոգայ Անօգնական Ընտանիքները» խմբագրականով, կ'առաջարկէ կազմել օգնութեան յանձնախումբեր, զինուորներու չքաւոր ընտանիքներուն օգտակար դառնալու համար, նշելով որ այդ յանձնախումբերը կրնան ըլլալ ազգային դիմագծով կամ խառն³⁹:

Բացի այն իրողութենէն որ գործող բանակին մէջ «8000 հայեր պարկեշտօրէն կը ծառայէին»⁴⁰, հայերը կ'ընդառաջեն նաեւ կամաւորագրութեան արշաւին: Կամաւոր կ'ուզէ արձանագրուիլ նաեւ կաթողիկէ վարդապետ Հայր Յովսէփ Սիրահեան, զոր կը մերժեն միացնել գործող բանակին, իր պաշտօնին պատճառով ու կը կցեն Կարմիր Մահիկին⁴¹: Պոլսահայ թերթերուն մէջ գրեթէ ամէնօրեայ զրութեամբ կը տպագրուին գերի ինկած եւ վիրաւորուած հայ զինուորներուն անուանացանկերը: Պատրիարքարանին կողմէ զինուորական հիւանդանոցներու հոգեւոր հովիւ կը նշանակուի Սահակ Քհնյ. Փափագեան: Դասալէքութեան դէպքեր չեն պատահիր: Իր մասին մամուլին մէջ խօսիլ տուող միակ դէպքը կ'ըլլայ Ճին Թորոսի (Թորոս Տարտաղանեան) հրոսակախումբի պարագան⁴²: Ազատամարտ «Քրիստոնեայ Զինուորը Հաւատարիմ Իր Հայրենիքին» խմբագրականին մէջ, լուսարձակի տակ կ'առնէ Իճթիհատ թերթի այն յօդուածը, ուր կ'ըսուի թէ սխալ է պատերազմի պարտութեան պատճառը քրիստոնեայ զինուորներուն վրայ բարդել, որովհետեւ անոնք կը կռուին քաջաբար. իսկ դասալէքութեան պարագաները քրիստոնեաներուն յատուկ չեն՝ այլ ընդհանրական⁴³:

Միւս կողմէ սակայն կրօնական զգացումներուն գրգռութիւնը կը շարունակուի: Այս կապակցութեամբ Ակնունի իր «Հայրենիքի Գաղափարը - Վտանգաւոր Ծամբայ» յօդուածին մէջ, գտնելէ ետք թէ «յանուն կրօնի եւ յանուն մարգարէի, յանուն մահիկի եւ ճիհատի» լողունգը, բազմացեղ եւ բազմակրօն երկրի մը համար պատերազմին չափ աւերիչ է, կ'աւելցնէ. «արիւնառատ պատերազմը այսօր չէ վաղը պիտի վերջանայ - յալիտենական չէ այն: Սակայն այդ «կրօնական» բորբոքումներով՝ հողակորուստի հետ միասին օսմանեան ժողովուրդները պիտի կորսնցնեն հայրենիքի մեծ գաղափար...: Վաղը կռիւն դարձող զինուորները պիտի պատմեն որ իրենք թշնամու դէմ քալեցին ոչ թէ վաթանն ու նրա պատիւը պաշտպանելու, այլ կռուելու «կեաւորների» դէմ, ոչնչացնելու «կեաւորները» որոնց միլիոնաւոր ներկայացուցիչները դեռ շարունակում են ապրել այս նոյն երկրի մէջ, դրկից մահմե-

տականին, նրա հանապազօրեայ կեանքին մասնակցող, իբրեւ զաւակ եւ տէր այս նոյն երկրի»⁴⁴:

Ռազմատենչ եւ ամբոխավարական միջնուորտին մէջ, առաջին անգամ հասարակական աշխուժութիւն հանդէս կը բերէ նաեւ թուրք կիներ: Օսմանեան Համալսարանին մէջ տեղի կ'ունենան կանանց կողմէ կազմակերպուած երկու հաւաքներ, որոնք իրենց վրայ կը բեւեռեն հանրային կարծիքին ուշադրութիւնը: Ազատամարտ իր «Թուրք Կիներու Հայրենասիրական Շարժումը»⁴⁵ խմբագրականով, «Պատերազմի Դաշտէն Վերադարձող Կամաւոր Թրքուհի Մը Իր Տպաւորութիւնները Կը Պատմէ»⁴⁶, Զապէլ Եսայեանի «Այդ Բաժակը - Թրքուհիներուն»⁴⁷, Է. Ակնունիի «Աղերսական Բողոքներ - Նոյնիսկ Կանայք»⁴⁸ յօդուածներով, համակրանքով կ'անդրադառնայ թրքուհիներու նոր շարժումին:

Ամբոխային տրամադրութիւններէն հեռու, ռազմաճակատին վրայ իրողութիւնը այլ պատկեր կը պարզէր: Մարտ 26ին, բուռն կռիւներէ ետք Էտիրնէն կ'անցնի պուլկար-սերպ ուժերուն ձեռքը: Մայիս 30ին Լոնտոնի մէջ պատերազմող կողմերուն միջեւ կը ստորագրուի համաձայնագիր, ուր Օսմանեան Կայսրութիւնը կ'ընդունի իր վիթխարի կորուստները: Ժողովուրդին մօտ իշխանութիւններուն հանդէպ հակալրութիւնը կը մեծնայ: Ընդդիմութիւնը պահը հասած կը սեպէ խլելու իշխանութիւնը: Յունիս 11ին տեղի կ'ունենայ պետական հարուածի փորձ: Պատերազմական Նախարարութենէն դէպի Բ. Դուռ երթալու ճամբուն վրայ, վարչապետ Մահմուտ Շեւքէթ կը սպաննուի: Սակայն պետական հարուածը չի յաջողիր: Իթիհատ կը շարժի շատ արագ եւ բիրտ: Մեծ թիւով ընդդիմադիրներ կը ձերբակալուին եւ անոնցմէ 12 հոգի Յունիս 24ին կախաղան կը հանուի Կ. Պոլսոյ Սուլթան Պալատին հրապարակին վրայ: Ընդդիմադիր այլ գործիչներ, որոնց շարքին Շերիֆ փաշա, իշխան Սապահէտին, Ռաշիտ պէյ, Իսմայիլ Հաքքը եւն. կը յաջողին փախուստ տալ արտասահման:

Երբ օսմանեան վարիչները գրադած էին երկրի ներքին տագնապներով, անդին, Պալքանեան Թերակղզիին վրայ տեղի կ'ունենան ճակատագրական շրջադարձեր: Օսմանեան Կայսրութենէն խլուած տարածքներու բաժանման շուրջ վէճեր կը ծագին երէկուան դաշնակիցներուն միջեւ: Պուլկարիան, որ պատերազմին բերած էր ամէնէն մեծ մասնակցութիւնը, չի բաւարարուիր իրեն բաժին հասած հողատարածքով: Յունիսի վերջաւորութեան ան կը յարձակի Յունաստանի եւ Սերպիոյ վրայ: Պուլկարիոյ դէմ պատերազմի կը ներգրաւուի Զեռնոգորիան: Պատերազմին կը մասնակցի նաեւ Ռումանիան: Կը սկսի Պալքանեան Բ. Պատերազմը: Օգտուելով առիթէն օսմանեան բանակները, Էնվէրի գլխաւորութեամբ, առանց լուրջ դիմադրութեան կը վերագրաւեն Էտիրնէն: Այս վերագրուման հանդէպ Ազատամարտ խանդավառութիւն ցոյց չի տար ու իր «Յետոյ, Ի՞նչ Պիտի Ըլլայ Հետեւանքը» խմբագրականին մէջ կը հար-

ցաղրէ թէ ի՞նչ շահ կրնայ տալ էտիրնէի գրաւումը երբ մեծ տէրութիւնները դէմ են այդ գրաւման. «Բ. Դուռը որու՞ն կը վստահի»⁴⁹. Հարց կու տայ թերթը: Այս վերագրաւումէն ետք, Օսմանեան Կայսրութեան ընդհանուր կորուստը պատերազմին կը կազմէ շուրջ մէկ միլիոն քառ. քիլոմետր տարածութիւն եւ 5.000.000 բնակչութիւն (Կայսրութեան ընդհ. տարածութիւնն էր երեք միլիոն քառ. քմ. իսկ բնակչութեան ընդհ. թիւը՝ 24 միլիոն)⁵⁰:

էտիրնէի վերագրաւումով եւ ընդդիմադիրներուն հանդէպ բիրտ հաշուեյարդարով Իթթիհատ կը դառնայ մենատէր: Թալաթ, էնվէր, Քեմալ «կարմիր եռապետութիւնը կը սկսի երկիրը ղեկավարել կարմիր սուլթան Համիտին նմանողութեամբ»⁵¹:

* *

Պալքանեան Պատերազմին սկիզբը, գրագէտ եւ հասարակական գործիչ Արշակ Զօպանեան Պուլկարիոյ կառավարութեան յղած իր նամակին մէջ կը գրէ. «մենք երբեք չենք մոռանայ ձեր ժողովրդի հիւրընկալութիւնը բազմաթիւ հայերի նկատմամբ, որոնք համիտեան ջարդերից յետոյ հանգրուան գտան Պուլկարիայում: Նրանց գաղթը եղեռնի արդիւնք էր: Այժմ այդ հայերը դժուարանում են իրենց զգացումներն արտայայտել: Սակայն կովկասեան հայերն ամէնուրեք իրենց թերթերում համարձակօրէն գրում են եւ արտայայտում իրենց համարձակ որոշումները՝ օգնելու պալքանեան ժողովուրդներին: Ես համոզուած եմ, որ Ռուսաստանի ուսանողական մեծ խմբեր պատրաստ են որպէս կամաւորներ ռուսների հետ միասին մարտնչելու թուրքին դէմ»⁵²: Զօպանեան չէր սխալւեր. հայ ժողովուրդը իր սրտին մէջ պալքանեան ժողովուրդներուն հանդէպ երախտագիտական զգացումներ կը տածէր. բայց ոչ միայն այդքան: Պալքանեան Պատերազմը կ'արտայայտէր չրջանի ժողովուրդներուն ազատագրական ձգտումները Օսմանեան Կայսրութենէն: Այդ ձգտումները իրենց տարագումը գտած էին բարեկարգութեան պահանջներով, որոնք միջազգային դիւանագիտութեան մէջ ամրագրուած էին Պերլինի եւ այլ դաշնագիրներով: Այդուհանդերձ, օսմանեան իշխանութիւնները, հակառակ տրուած խոստումներուն, բարեկարգութիւններու պահանջը անտեսած էին: Այս բոլորով, արեւմտահայութեան եւ պալքանեան ժողովուրդներուն մղած պայքարները գէթ իրենց վախճանական նպատակներուն տեսակէտէն կը դառնային համանման. անոնք բնական դաշնակիցներ էին: Երեւոյթ մը՝ որ չէր կրնար գործնապէս իր արտայայտութիւնը չունենալ: Սակայն, արեւմտահայութիւնը չէր կրնար այդ համակրութիւնը արտայայտել. պատերազմի մէջ գտնուող երկրի մը համար այդ կրնար դաւաճանութեան համագործակալութիւն իր բոլոր հետեւանքներով:

Պատերազմին հանդէպ հայութեան մօտ յառաջ եկած հակասական կեցուածքներուն կ'անդրադառնայ Միքայէլ Վարանդեան 14 Հոկտեմբեր 1912ին ժընեւէն Սիմոն Զաւարեանին յղած իր նամակին մէջ, գրելով թէ Պալքանեան Պատերազմին հանդէպ հակասական կեցուածքներ կան ՀՅԴ Կովկասի, Կ.Պոլսոյ եւ պալքաններու կազմակերպութիւններուն միջեւ եւ թէ պալքաններու մէջ զաշնակցական երիտասարդներ խանդավառութեամբ կը մասնակցին մարտական խումբերու կազմութեան՝ օսմանցիներուն դէմ կռուելու համար⁵³։ Պալքանեան ժողովուրդներու ազատագրական պայքարին հանդէպ համակրական եւ օսմանեան հայրենիքին հանդէպ օրինապահ քաղաքացիի կեցուածքներուն միջեւ ծնած հակասութիւնը երբեմն սխալ կ'ընկալուի նաեւ պալքանեան գինակցութեան երկիրներուն կողմէ։ Օրինակի համար, յունական իշխանութիւնները, ի տես Օսմանեան Կայսրութեան մէջ բնակող հայութեան օրինապահ կեցուածքին, Յունաստանի մէջ կը ձերբակալեն կարգ մը թրքահայեր⁵⁴։

Պալքանեան ժողովուրդներուն հանդէպ հայութեան համակրանքը իր արտայայտութիւնը կը գտնէ երբ Հոկտեմբեր 8ին Սոֆիայի մէջ պուլկարական բանակի կողքին կը կազմաւորուի հայ կամաւորներէ բաղկացած ջոկատ մը։ 270 սպայ եւ զինուոր հաշուող կամաւորական ջոկատի հրամանատար կը նշանակուի ենթասպայ (փոտպորուշիկ) Գարեգին Նժդեհը իսկ հարիւրապետ (պոյեւոտ)՝ Անդրանիկը (յետագային Անդրանիկ եւս կը ստանայ փոտպորուշիկի աստիճան)։ Զոկատը կը մտնէ 12րդ Լոզենկրատեան Գումարտակի կազմին մէջ եւ նշանակալից մասնակցութիւն կը բերէ Ուզուն Համիտլար լեռնաշղթայի կռիւներուն, Կիւմիւրճինա քաղաքի ազատագրութեան, Մարիմա գետի եզերքին եւ Մելհամա գիւղին մօտ տեղի ունեցած ճակատամարտերուն։ Դեկտեմբերին ջոկատը կը հասնի Մարմարայի ծովափին գտնուող Փանատաս գիւղը (Ռոտոսթոյի մօտ), ապա կը մասնակցի Շար-Քէօյի մօտակայքը տեղի ունեցած կռիւներուն ու կը ստանձնէ Փլատանոս գիւղին պաշտպանութիւնը։ 1913 Մայիս 27ին ջոկատը կը զօրացրուի։ Պատերազմի ընթացքին իրենց զինուորական կարողութիւններով եւ քաջութեամբ Անդրանիկի ու Նժդեհի կողքին աչքի կ'իյնան Յովհաննէս Զաւուշը (Պողոսեան), Սարգիս Արմաղանեանը եւ ուրիշներ։ Զոկատի շարք մը մարտիկներ կը պարգեւատրուին զինուորական շքանշաններով⁵⁵։ Նկատելի է որ կամաւորական այս ջոկատի գործունէութեան մասին պոլսահայ մամուլը չ'անդրադառնար։

* *

Պալքանեան Պատերազմի ամբողջ ընթացքին, երբ մէկ կողմէ արտաքին թշնամիին առկայութիւնը կը ստիպէր աւելի ուշադիր ըլլալ ներքին կայունութեան՝ սիրաշահելով փոքրամասնութիւնները, իսկ միւս կողմէ՝ երբ հայկական նահանգներու բարեկարգման հարցը ենթադրել կու

տար յաւելեալ հոգատարութիւն գաւառի հայութեան հանդէպ, ամէն տրամաբանութենէ դուրս, խստօրէն կ'աճին հակահայ բռնարարքները: Տակաւին սուլթան Համիտի օրերէն հռչակ ստացած աւագակախումբեր՝ Սայիտ պէկի, Միր Մհէի, Իսաւ Մրկէի, Կապարցի Մահմէտի, Թահիր աղայի եւ այլոց խումբերը կը ստուարանան ու կը դառնան հայ գիւղացիութեան պատուհասը⁵⁶: Միայն 6 ամսուան ընթացքին Վանի նահանգին մէջ կը սպաննուի 54 հայ⁵⁷: Պոլսահայ թերթերը կը լեցուին գաւառէն հասնող սպանութիւններու, առեւանգումներու, աւերումներու նկարագրութիւններով: Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը այդ կապակցութեամբ բազմաթիւ յուշագիրներ կը յղէ վարչապետարան եւ Ներքին Գործոց Նախարարութիւն: Կ'առեւանգուին ու կը բռնաբարուին պատերազմի մեկնած հայ զինուորներու կանայք: Սապահ Գիւլեան, իր «Փաստեր եւ Իրողութիւններ» յօդուածին մէջ կը գրէ. «հայ զինուորը պատերազմի դաշտը գնդակների տեղատարափին է կուրծք տալիս, սակայն Հայաստանի մէջ նրա կինը, քոյրը, մայրը անպատիժ կերպով բռնաբարում են, իր ստացուածքները յափշտակում, եւ այդ էլ «հայրենիքի փրկութեան» համար կեանք տուած ժամանակը»⁵⁸: Ռազմաճակատ մեկնած հայ զինուորներու կանանց բռնի կրօնափոխման հարցով Պատրիարքարանը երկու առիթներով յուշագիր կը յղէ Պատերազմական Նախարարութիւն, որ կը պատասխանէ թէ քանի որ քրիստոնեայ զինուորի մը ծառայութեան ժամանակ իսլամացումը օրինական չի նկատուիր, ուստի, բանակ մեկնած զինուորի մը կնկան իսլամացումը եւս չի կրնար օրինական նկատուիլ...⁵⁹:

Պատերազմին հետեւանքով, մեծ թիւով իսլամ գաղթականներ Պալքանեան թերակղզիէն կ'ապաստանին Անատոլիա ու անոնցմէ մաս մը կը տեղակայուի հայկական նահանգներուն մէջ: Հայութեան մօտ մտավախութիւն կ'առաջանայ, որ հայկական նահանգներուն ազգագրական պատկերը փոխելու նպատակով, օսմանեան կառավարութիւնը ծրագրուած ձեւով այդ գաղթականները կը վերաբնակեցնէ հայկական նահանգներուն մէջ: Գաղթական այդ բազմութիւնները կը ստեղծէին նաեւ ապահովական մտահոգութիւններ, որովհետեւ անցած ըլլալով պատերազմի արհաւիրքէն, վրէժխնդրական զգացումներ ունէին քրիստոնեաներուն հանդէպ: 1912 Մայիս 12ին Արշարունի Պատրիարք, պատուիրակութեամբ մը կը տեսակցի վարչապետ Մահմուտ Շեքէթ փաշային հետ ու անոր կը փոխանցէ յուշագիր մը՝ հայկական գաւառներու վիճակին մասին: Վարչապետը գովեստով կը խօսի հայ զինուորներու հաւատարմութեան եւ հայրենասիրութեան մասին ու կը խոստանայ միջոցներ ձեռք առնել գործուած չարիքները դարմանելու համար: Ան կը յայտնէ նաեւ թէ Ռումելիի գաղթականները հայկական գաւառներ տեղաւորելու հարց չկայ: Հանդիպումէն ետք Մահմուտ Շեքէթ փաշա թղթակիցներուն կը կատարէ յայտարարութիւն եւ կը պատասխանէ անոնց հար-

ցումներուն: Ան կ'ընդունի թէ «մէկ քանի նահանգներու մէջ հայ ազգը բռնութիւններու եւ յարձակումներու ենթակայ եղած է», սակայն անոնց պատասխանատուութիւնը կը դնէ անպատասխանատու պաշտօնեաներուն ուսերուն, որոնք փոխարինելու համար կառավարութիւնը արդէն իսկ քայլերու դիմած է: Վարչապետը կ'աւելցնէ. «պէտք է ըսել թէ հայերը չեն որ այս հարստահարութեանց զոհ կ'երթան, թուրքերն ու քիւրտերն ալ նոյն վիճակին ենթակայ են»: Ան նաեւ կը ժխտէ պատերազմին մէջ արձանագրուած պարտութիւններուն հայերու պատասխանատուութիւնը ու կ'ըսէ. «պէտք է խոստովանիլ թէ օսմանցի քրիստոնեայ հպատակներուն մէջ հայերը միշտ ամենէն հաւատարիմները եղած են եւ այս վերջին պատերազմին հերոսաբար կռուած են մեր թշնամիին դէմ»⁶⁰:

Վերոյիշեալ հանդիպումը եւ վարչապետին յայտարարութիւնները լայն արձագանգ կը գտնեն մամուլին մէջ: Ազատամարտ, անուղղակիօրէն պատասխանելով վարչապետին, իր «Մուհաճիրները» խմբագրականին մէջ կը գրէ թէ Ռուսիոյի գաղթականները քրիստոնեայ շրջաններուն մէջ վերաբնակեցնելու հարցը լուրջ է, մասնաւորաբար նշելով որ Արեւելեան Անատոլիոյ զրկուած են Ռուսիոյի գրաւուած տարածքներու պետական պաշտօնեաները⁶¹: Լա Թուրք եւ Սթանպուլ թերթերը կը գտնեն թէ պատրիարքին յուշագիրը արդարացի է եւ կառավարութիւնը պէտք է այդ ուղղութեամբ գործնական քայլերու դիմէ⁶²: Թերճիւմանը Հաքիքաթ եւ ժէօն Թուրք թերթերը շեշտը կը դնեն վարչապետին այն յայտարարութեան՝ որ միայն հայերը չեն շահատակութեանց ենթարկուողները ու կը նշեն թէ պատերազմին մէջ հայերը կը կռուին քաջաբար⁶³: Թասֆիրի Էֆքիար կ'ըսէ թէ նման յուշագիրները պէտք է նկատի առնեն ժամանակաշրջանը ու կը մերժէ մտնել անոր բովանդակութեան քննարկման մէջ, որովհետեւ այդ մասին ինք ճշգրիտ տեղեկութիւններ չունի: Թերթը կը տպէ նաեւ Արշարունի Պատրիարքին լուսանկարը եւ անոր մասին կը գրէ անպատշաճ լեզուով⁶⁴: Քիւրտ ծագումով ծերակուտական Ապտուլ Քատէր Օսմանշէր Լոյս թերթին մէջ կը բողոքէ որ պատրիարքը անարգած է քիւրտերը: «Եթէ քիւրտերը ուզէին, շատոնց բնաջինջ ըրած կ'ըլլային հայերը» կ'ըսէ ան ու հողային հարցի կապակցութեամբ կ'աւելցնէ. «կարելի չէ քիւրտերուն ձեռքէն առնել իրենց հողերը - փոքորիկ կը պայթի» եւ քիւրտերը ամէն ինչ կ'ընեն այդ հողերուն վերատիրանալու համար⁶⁵: Արդարադատութեան Նախարարութիւնը, Պիթլիսի նահանգապետէն եկած տեղեկագիրի մը հիման վրայ կը հաղորդէ թէ պատրիարքը իր յուշագիրին մէջ եղելութիւնները չափազանցած է: Պատասխանելով Արդարադատութեան Նախարարութեան, Արշարունի Պատրիարք կը հրապարակէ հակահայ վայրագութիւններուն մանրամասն նկարագրութիւնը⁶⁶: Ռուսական Տէն թերթը յոյս կը յայտնէ որ այս անգամ պատրիարքին յուշագիրը բարձիթողի չի մնար, որովհետեւ

Պալքանեան Պատերազմի պարտութեամբ Թուրքիա սորված պէտք է ըլլայ թէ ի՞նչ կը նշանակէ բաղկացուցիչ ազգութիւններուն բողոքները նկատի չառնել: «Փոքր Ասիայի տնտեսական զարգացման հետ Հայաստանը աւելի ու աւելի ասպարէզ կը դառնայ միջազգային ախորժակներու» կը գրէ թերթը եւ յոյս կը յայտնէ թէ հայերը կը գիտնան որուն⁶⁷ կողքին դիրքորոշուիլ:

Պատրիարքարանի յուշագիրներուն զուգահեռ, հայ գիւղացիութեան տառապալից իրավիճակին մասին բողոքի այլաբնոյթ ձեռնարկներ կը կազմակերպեն արեւմտահայ իրականութեան մէջ գործող կուսակցութիւնները՝ ՍԴՀԿ, ՀՅԴ, Վերակազմեալ Հնչակեան եւ Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութիւն: Կը կազմակերպուին նաեւ միջկուսակցական բնոյթի բողոքի ելոյթներ հակառակ անոր, որ 1912 Մարտ-Մայիս ամիսներուն հայ կուսակցութիւններուն միջեւ յարաբերութիւնները բաւական լարուած էին՝ երեսփոխանական ընտրութիւններուն բերմամբ: Կայսրութեան տարածքին եւ անկէ դուրս միջկուսակցական բնոյթի նախաձեռնութիւններ կը կատարուին Վանի⁶⁸, Սոփիայի⁶⁹, Աղեքսանդրիոյ⁷⁰, Իզմիրի⁷¹, Էրզրումի⁷², Կ.Պոլսոյ⁷³ մէջ եւ այլուր:

1913 Յուլիս 1ին (Դեսպանական Յանձնախումբի կազմութեան յաջորդ օրը) Ներքին Գործոց նախարար Թալաաթ կ'այցելէ Արշարունի Պատրիարքին ու կը հաղորդէ թէ գաւառներուն մէջ իշխանութիւնները սկսած են հետապնդել ու ձերբակալել աւազակները: Պատրիարքը կը պատասխանէ թէ ինք տակաւին յայտնի աւազակապետի մը ձերբակալման լուրը ստացած չէ: Թալաաթ կը բացատրէ թէ գործը դժուար է եւ աւազակախումբերը կ'ապաստանին Պարսկաստան ու կ'աւելցնէ թէ Անատոլիոյ մէջ բարեկարգումներ իրագործելու համար կառավարութիւնը Անգլիայէն եւ Զուիցերիայէն մասնագէտներ պահանջած է: Պատրիարքի այն հարցին թէ բարեկարգութիւնները վարչականօրէն կեդրոնաձիգ թէ՛ ապակեդրոն դրութեամբ պիտի գործադրուին, Թալաաթ կը պատասխանէ թէ բարեկարգութիւնները ապակեդրոն դրութեամբ տեղի պիտի ունենան ու կ'աւելցնէ՝ «Զերդ Սրբութենէն կը խնդրեմ որ մեզի օգնէք, եւ անանկ բան մը ընենք, որ եւրոպական տէրութիւնները չմիջամտեն»⁷⁴:

1912 Յուլիս-1913 Յունուար միջոցին, երբ իշխանութիւնը կ'անցնի հակաիթիւհատականներուն ձեռքը, հակահայ արարքները կը ստանան նոր թափ: Լուրջ կասկածներ կը չրջին թէ հակահայ վայրագութիւններու նոր ալիքին ետին կեցած է Իթիհատը՝ իշխանութիւններուն հանդէպ հայութեան ատելութիւնը գրգռելու համար: Անդրադառնալով այս մասին, Սապահ Գիւլեան իր «Պալքարի Ուղին» յօդուածին մէջ կը գրէ. «մենք չենք, որ Իթիհատին այդպիսի փոքրոգութեան վկայական չտանք. նա ընդունակ է այդպիսի արարքի»⁷⁵: Պատասխանելով Նոր Աշխարհ եւ Ժամանակ թերթերու այսօրինակ պնդումներուն, Թանին կը

գրէ թէ անհիմն է հակահայ արարքներուն ետին Իթթիհատը տեսնել, ընդհակառակը՝ այդ արարքները նոր թափ ստացած են Իթթիհատին իշխանութենէն հեռանալուն պատճառով⁷⁶։ Թանին Տիարպեքիրի մէջ սպաննուած Հաննա Գազագեանի ոճիրը կը վերագրէ Իթիլաֆին⁷⁷։ Հակադրուելով Թանինի այդօրինակ պնդումներուն, Յ. Արծրունի իր «Զրպարտիչները Բեմին Վրայ» յօդուածին մէջ կը գրէ, «Ոճիրներու փաստերը շատ ծանր կը կշռեն Իթթիհատի ուսերուն վրայ, որոնց տակ սոսկալիօրէն կը քած է ան։ Ուրեմն անոր գոյնը պարզ մէջտեղն է, արեւի լոյսին պէս, իբրեւ կատարուած իրականութիւն։ Իսկ միւսը, Իթիլաֆը, բարեբախտաբար չէ մտած ոճիրի շրջանին մէջ, որով զայն մեղադրելու իրաւունք չունինք առ այժմ»⁷⁸։ Աւելի ուշ, Թանին կ'ամբաստանէ Ներքին Գործոց նախարար Թանիշ պէյը, որ Արշարունի Պատրիարքին ըսած է թէ հակահայ վայրագութեանց ետին կեցած է Իթթիհատը, իսկ պատրիարքը այդ տեղեկութիւնը յայտնած է ռուս թղթակից Քոչիինսկիին⁷⁹։ Պատրիարքարանը պաշտօնապէս կը հերքէ այս լուրը իսկ Թանին իր հայ պաշտօնակիցներուն կ'առաջարկէ տպել այդ հերքումը⁸⁰։

Պատրիարքարանի յուշագիրներն ու բողոքի այլազան ելոյթները գործնական գետնի վրայ արդիւնք չեն տար։ Հակահայ արարքները կը շարունակուին ու անմեղ քաղաքացիներու կողքին այդ արարքներուն զոհերը կը սկսին դառնալ նաեւ երեւելի հայեր։

1912 Հոկտեմբեր 11ին Սէյիտ Ալիի աւագակախումբին կողմէ կը սպաննուին Տէր Սարգիս քահանան եւ Աղթամարի թեմական դպրոցներու տեսուչ Ռաֆայէլ Երեմեանը։ Նոյեմբեր 26ին Վանի մէջ կը սպաննուի ՀԲԸՄ Վանի մասնաճիւղի նախագահ Պետրոս Գափամաճեանը։ Քանի որ Գափամաճեան տարակարծութիւններ ունէր ՀՅԴի հետ, իշխանութիւնները կը փորձեն ոճիրը վերագրել դաշնակցականներուն⁸¹։ 1913 Յուլիսին, Մուշ կատարած իրենց այցելութեան ժամանակ, առանց լուրջ պատճառաբանութեան կը ձերբակալուին ՀՅԴ յայտնի դէմքերէն Ռոստոմն ու Արմէն Գարօն (Գարեգին Փաստրմաճեան)։ Ազատ արձակուելէն ետք, Գարօ Ներքին Գործոց նախարար Թալաաթ փաշային հասցէագրած իր բաց նամակին մէջ կը գրէ. «Իմ վերջին ճամփորդութեանս ընթացքին, շրջելով Կարնոյ, Վանայ եւ Պիթլիսի վիլայեթները, ես վերջնականապէս համոզուեցայ որ մեր երկրի այս մասերը հիմնական բարեփոխութեան կարիքը ունին, եթէ չենք ցանկար Ռումելիի բախտին յանձնել նաեւ այս նահանգները»⁸²։ Օգոստոս 28ին Վանի մէջ դարանակալ զնդակներու զոհ կ'երթայ հնչակեան յայտնի գործիչ Ազատ Ոստանիկը (Մելքոն Միր-Սատոյեան)։ Վանի շուկան առ ի բողոք երեք օր փակ կը մնայ։ Շուրջ 5000 հոգիի մասնակցութեամբ տեղի ունեցող յուղարկաւորութիւնը կը վերածուի հակակառավարական ցոյցի։ Իշխանութիւնները կը փորձեն խափանել թաղման երթը, սակայն կը հանդիպին վճռական հակազդեցութեան (թաղման թափօրին, հայ կուսակցութիւն-

ներուն կողմէ կը մասնակցէին նաեւ գինեայ խումբեր)⁸³։ Սեպտեմբեր 17ին Պատրիարքարանէն պատուիրակութիւն մը կ'այցելէ Ներքին Գործոց նախարար Թալաթին ու անոր կը փոխանցէ Ոստանիկի սպանութեան մանրամասնութիւնները։ Թալաթ փաշա անոնց կ'ըսէ թէ իրեն հասած վերջին տեղեկութիւնները եւս կը հաստատեն թէ ոճիրը հայերը գործած չեն...⁸⁴։

Հակահայ ոճիրներու մասին գաւառէն հասնող լուրերուն զուգահեռ, տեղեկութիւններ կը հասնին նաեւ ռազմաճակատէն, որոնց համաձայն Ռոտոսթոյի մէջ օսմանեան բանակը հակահայ ջարդեր կատարած է։ Թրքական կարգ մը թերթեր կը գրեն թէ Ռոտոսթոյի վերագրաւումէն առաջ, հայերը իսլամ բնակչութեան դէմ վայրագութիւններ կատարած են⁸⁵։ Ռոտոսթոյի մէջ կատարուած դէպքերուն որպէս բողոք, Օգոստոս 1ին Արշարունի Պատրիարք կը հրաժարի⁸⁶։ Նոր պատրիարք կ'ընտրուի Զաւէն Եպս. Տէր Եղիայեան։

1908ին, սահմանադրութեան վերահաստատումէն ետք, արեւմտահայութեան մօտ արմատապէս հիմնաւորուած էր օսմանեան երկիրը «հայրենիք» ընդունելու գաղափարը։ Այս գաղափարի ջատագովներէն էր ՀՅԴՆ⁸⁷։ Սակայն, իթթիհատականները աւելի յառաջ երթալով, «օսմանեան հայրենիք» գաղափարին կողքին, կը պաշտպանեն նաեւ «օսմանեան ազգ»ի տեսութիւնը, որ արեւմտահայութեան մօտ չի հիմնաւորուիր։ այս տեսութեան արմատական ընդդիմախօս էր ՄԴՀԿը։ Սակայն, Պալքանեան Պատերազմին ընթացքին արեւմտահայութեան մօտ կը հասունանայ նոր իրավիճակ մը։ մէկ կողմէ ռազմաճակատին վրայ եւ թիկունքին՝ հաւատարմօրէն պաշտպանել հայրենիքը եւ միւս կողմէ իր տան ու ծննդավայրին մէջ մնալ անպաշտպան եւ անապահով։ Հետզհետէ կ'աճի «օսմանեան հայրենիք»էն օտարումի զգացումը։ Այս իրավիճակին գեղարուեստական պատկերումը կու տայ բանաստեղծ Սիամանթօ իր «Հայ Զինուորի Մը Թաղումը» գրութեամբ, ուր կը նկարագրուի ռազմաճակատին վրայ նահատակուած Խաչիկ անունով հայ զինուորի մը թաղումը՝ «թէ սիրելի անձամօթս, ո՛չ ոք քու վրադ չի լացաւ, այլ բոլորն ալ լացին անոնց վրայ որոնց դէմքերը ցոյց տուիր մեզ՝ մահուան մեծ դուռը բանալով՝ անկէ ներս մտած պահուդ, հարիւր հազար հին գոհերուն, այս երկրին համար, եւ տասնեակ հազար մը նոր գոհերուն դէմքերը, դարձեալ այս երկրին համար ցոյց տուիր մեզի։ Ակնթարթ մը դուն այդ դուռը մեր առջեւ բացիր։ ...Զինուոր Խաչիկ, ըսէ՛, մահէդ չորս օր առաջ Վանայ մէջ սպաննուած Ռաֆայէլ Երեմեանի մահը իմացա՞ր...։ Ա՛հ եթէ իմացար Ռաֆայէլի եւ գեղջուկ քահանային մահը, քու մահդ դառնօրէն ահաւոր եղաւ, դառնօրէն միամիտ, դառնօրէն անպտուղ...»⁸⁸։

* *

Պալքանեան Պատերազմը վերստին միջազգային դիւանագիտութեան ասպարէզ կը հանէ Օսմանեան Կայսրութեան մէջ բարեկարգութիւններ կատարելու հարցը: Հարց մը՝ որ կը կազմէր արեւելեան Անատոլիայի հայ բնակչութեան առաջնահերթ պահանջը:

Պատերազմէն ետք հաշտութեան դաշինքի մը համար տարուելիք բանակցութիւններուն եւ ժողովներուն ընթացքին հայկական նահանգներուն մէջ բարեկարգութեան հարցը եւս արծարծելու առ ի նախապատրաստութիւն, 1912 Նոյեմբեր 10ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանց յատուկ կոնդակով մը Պօղոս Նուպար փաշան կը լիազօրէ կազմելու Ազգային Պատուիրակութիւն մը, որ կ'ընդգրկէ՝ Պօղոս Նուպար փաշան (նախագահ), Գէորգ Արք. Ութուճեանը, Յակոբ Արթին փաշան, Մինաս Չերազը եւ Յարութիւն Մոստիշեանը: Պատուիրակութիւնը եւրոպական մայրաքաղաքներուն մէջ կը ծաւալէ աշխոյժ գործունէութիւն՝ Պերլինի Դաշնագիրը ստորագրած պետութիւններուն հետ բանակցութիւններ վարելու տեսակէտէ:

Պատերազմական գործողութիւնները սկսելէն քանի մը օր առաջ, հաւանաբար պատերազմի մղձաւանջին ազդեցութեան տակ, Մուրատ պէյ Թանգիւմաթ թերթին մէջ կը գրէ թէ Ռուսիոյի մէջ բարեկարգութիւնները անհրաժեշտութիւն են՝ «պատերազմ ըլլայ կամ ոչ»⁸⁹: Նոյն թերթին մէջ Լուիս Նիքրի կը պաշտպանէ բարեկարգութիւնները Անատոլիայի մէջ եւս կատարելու գաղափարը: Սակայն Հիւսէյին Ճահիտ Թանիւնի մէջ, անդրադառնալով եւրոպական թուրքիոյ եւ Արեւելեան Անատոլիայի մէջ բարեկարգութիւններ պահանջող Պերլինի Դաշնագրին համապատասխանաբար 23րդ եւ 61րդ յօդուածներուն, հարց կու տայ. «Ո՞վ պիտի ապահովցնէ մեզ թէ այսօր իրենց ողջնցնել ուզած 23րդ յօդուածին վաղը 61րդ յօդուածը չպիտի յաջորդէ եւ միջամտութեան միեւնոյն իրաւունքը չպիտի յայտնուի նաեւ արեւելեան Անատոլիոյի մէջ»⁹⁰: Ազատամարտ իր «Բարեկարգութիւնը Պատուհաս - 23րդէն Ետք 61երորդը» խմբագրականին մէջ կը գրէ. «Եւ օսմանեան հայրենիքի այս նեղ ճգնաժամին, Թանին աւելի քան որեւէ օրկան լաւ պիտի ըմբռնէր թէ բոլոր այս արհաւիրքները ամէն բանէ առաջ ահաւոր դատապարտութիւն մըն են իր ներկայացուցած կուսակցութեան (Իթթիհատ - Ե.Ճ.) նեղ եւ կարճատեւ գործելակերպին, անոր քաղաքականութեան բացարձակ տհասութեանը»⁹¹: Բանավէճին կ'ընդգրկուի նաեւ ընդդիմադիր Թաամինաթ թերթը որ պատասխանելով Թանինին կը գտնէ որ 1880ի Ռուսիոյի համաձայնութեամբ խոստացուած բարեկարգութիւններէն վնաս չկայ եւ ժողովուրդը անորմով պէտք չէ վախցնել: Թերթը կը գտնէ թէ յառաջ եկած ղեկարգութիւնները հետեւանք են աւոր, որ սահմանադրական երկիրը չղեկավարուեցաւ սահմանադրութեամբ. եթէ չորս տարիէ կիրարկուող «Թալաաթպէյական դրութիւնը

շարունակուի ... արդեօք վտանգը ատելի քի՞չ պիտի ըլլայ»՝ հարց կու տայ *Թաամինաթ*⁹²:

Հայկական նահանգներուն մէջ բարեկարգումներ կատարելու պահանջքին՝ օսմանեան վարիչները կը հակադրուին մի քանի անուղղակի առարկութիւններով: Այդ առարկութիւններէն առաջինը, թէ՛ ընդհանուր բարեկարգութիւններու կարիքը ունի ամբողջ Կայսրութիւնը, ուստի, առանձնաբար որեւէ շրջանի մէջ մասնակի բարեկարգումներու անհրաժեշտութիւնը չկայ, նոր տեսակէտ չէր:

Այդ պատճառաբանութեամբ երիտթրքական շարժման պարագլուխները կը հակառակէին հայկական նահանգներուն մէջ բարեկարգութիւններ կատարելու պահանջքին՝ տակաւին 1890ականներուն, երբ դեռ կը գտնուէին վտարանդիութեան մէջ⁹³: *Թերճիւմանը Հաքիթաթ* կը գտնէ թէ իշխանութիւնները միշտ ալ ցանկութիւն ունեցած են բարեկարգութիւններ կատարելու, սակայն դիւանակալութիւնը, վարանումները, դանդաղաշարժութիւնը ինչպէս նաեւ «մեր մէջ տարիներէ ի վեր իրենց անջատողական ձգտումները իրագործելու համար աշխատող կեդրոնախոյզ ուժերուն ազդեցութիւնը» խոչընդոտած են այդ: *Թերթը* կը գտնէ թէ Արեւելեան Անատոլիոյ չափ ամբողջ Կայսրութիւնը պէտք ունի բարեկարգումներու, ուստի այն պէտք է ըլլայ ընդհանուր⁹⁴: Ազատամարտ իր «Ընդհանուր եւ Մասնաւոր Բարեկարգութիւն Հայկական Նահանգներու Առիթով» խմբագրականով կը հակադրուի *Թերճիւմանը Հաքիթաթին* ու հաստատելէ ետք թէ բարեկարգութիւնները պէտք է բխին տուեալ շրջանի իւրայատկութիւններէն եւ պահանջներէն կ'եզրակացնէ. «ընդհանուր բարեկարգութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մասնակի բարենորոգումներու ամբողջութիւնը»⁹⁵:

Օսմանեան վարիչներու միւս առարկութիւնը այն էր, թէ պատերազմի մէջ գտնուող երկրի մը համար բարեկարգութիւններու պահանջքը անժամանակ է: Մինչդեռ, հայերուն մօտ կ'ամրապնդուի այն համոզումը որ Պալքանեան Պատերազմը արտաքին ճնշման այն միջոցն է, որ մով կարելի է օսմանեան իշխանութիւններէն բարեկարգումներ կորզել: Անդրադառնալով այս առարկութեան, Ակնունի իր «*Խնդիր Մի Յարուցէք... Անհիմն Մեղադրանք*» յօդուածին մէջ կը գրէ. «մեզ ասում են. մի՞թէ ռեֆորմների ժամանակ է: Մենք էլ հարցնում ենք. մի՞թէ սպաննելու ժամանակ է...: Հայը մեծ ռեֆորմ չի պահանջում այս րոպէիս: Նա պահանջում է չսպաննել, չթալանել, չբռնաբարել: Մի՞թէ չսպաննուելու ու չթալանուելու իրաւունքն էլ կարօտ է ռեֆորմների – սահմանադրական թուրքիոյ մէջ»⁹⁶: Հնչակեան գործիչ Վանիկ (Գեղամ Վանիկեան) եւս կը զարմանայ թուրք մտաւորականներու այն մտածելակերպին «որոնք կը պնդեն թէ դեռ բարեկարգումներու ժամանակը չէ, նախ ինքզինքնիս ազատենք սա պատերազմէն ու ապա մտածենք, ու կ'աւելցնէ, բարենորոգում ըստածը ինչ ժամանակ ալ գործադրուի,

դարձեալ օգտակար է, քանի որ այդ միջոցով միայն Թուրքիան կրնայ փրկուիլ»⁹⁷:

Օսմանեան վարիչները յատկապէս կը հակառակէին բարեկարգումները մեծ տէրութեանց վերահսկողութեան տակ իրականացնելու պահանջքին, զայն նկատելով օտարերկրեայ միջամտութիւն՝ որմէ կը զգուշանային ահաւոր կերպով: Մինչդեռ հայութիւնը՝ պատմական փորձէն ելլելով, իշխանութիւններու խոստումներուն հաւատք չէր ընծայեր եւ պահանջուած բարեկարգումներուն համար կը փափաքէր ունենալ մեծ տէրութեանց վերահսկողութիւնը: *L'Asie Francaise*ի մէջ գերկոմս Ռոպէր Տը Քէ իր «Հայկական Բարենորոգմանց Խնդիրը» յօդուածին մէջ կը գրէ. «մենք ըսինք, եւ մեզի հետ ըսին ո՛չ միայն Անգլիոյ եւ ուրիշ տեղերու հայաստները, այլեւ Թուրքիոյ բոլոր ճշմարիտ բարեկամները, թէ առանց օտար քոնքրովի օսմանեան բարենորոգումները թուրքի վրայ միայն գոյութիւն պիտի կրնան ունենալ»⁹⁸: Սակայն, իշխանութեան կարծիքը այդպէս չէր: Իթիհատի յայտնի դէմքերէն, նախկին Շէնմտական նախարար Ճաւիտ պէյ, պաշտօնական պատուիրակութեամբ մը Փարիզ գտնուած միջոցին կու տայ մամլոյ ասուլիս մը ուր կ'ըսէ թէ տեսակցած է Պօղոս Նուպար փաշային ու անոր հետ խորհրդակցած հայկական բարեկարգումներուն մասին. Ճաւիտ պէյ կ'աւելցնէ. «գրեթէ բոլոր կէտերու մասին համաձայն ենք իրեն հետ՝ բացի այդ երաշխաւորութեան կէտէն, որովհետեւ եւրոպական վերահսկողութիւնը կամ երաշխաւորութիւնը, գործին ամենափափուկ կէտն է»⁹⁹: Թուրք Ազգայնական Կուսակցութեան օրկան *Իֆհամ* թերթին տրուած հարցազրոյցի մը մէջ Ներքին Գործոց նախարար Ռաշիտ պէյ անդրադառնալով եւրոպական վերահսկողութեան տակ Արեւելեան Անատոլիայի մէջ կատարուելիք բարեկարգումներու հարցին կ'ըսէ. «այդ տեսակ խնդիր մը զայն յարուցանել ուզողներու ուղեղներուն մէջ միայն գոյութիւն ունի: ...Մենք չենք կրնար հանդուրժել որ օտարները մեր ներքին եւ ազգային հարցերուն համար ազդարարութիւն անգամ ընեն, ուր մնաց միջամտութիւն»:¹⁰⁰ Օտար վերահսկողութեան դէմ էր նաեւ թուրք հանրային կարծիքին մեծ մասը, որուն արտայայտիչը դառնալով *Թասֆիրը* էֆֆիար իր «Հայկական Հարցը» յօդուածին մէջ խօսքը ուղղելով հայերուն կը գրէ. «կամ ըսէք եւրոպային որ մենք արտաքին միջամտութիւն չենք ուզեր, կամ...»¹⁰¹: Կախման կէտով լրացող այս «կամ»-ը բազմիմաստ էր...: Սպառնական նոյն ոճը օգտագործելով իթիլաֆական *Ալեմտար* թերթը կը գրէ. «երեւցածին նայելով կ'ուզուի արեւելեան նահանգներու խնդիր մը մէջտեղ հանել: Ասոնք ալ չափը կ'անցընեն կոր, արիւննիս գլուխնիս թող չցատկեցնեն»¹⁰²: *Իֆհամ* եւ *Ալեմտար* թերթերու գրգռիչ հրապարակումներուն դէմ պատրիարքարանը բողոքագիր կը յղէ Բ. Դրան¹⁰³:

Օսմանեան վարիչները մասնաւորապէս կը սարսափէին օտարերկրեայ վերահսկողութեան պատրուակին տակ պալքանեան զինակցութեան բացայայտօրէն թիկունք կեցած Ռուսիոյ ազդեցութեան Արեւելեան Անատոլիա ներթափանցումէն՝ զայն գտնելով տարածաշրջանը Կայսրութենէն անջատելու եւ իրենց ոխերիմ թշնամիին կցելու հայերու թաքուն տրամադրութիւններուն արտայայտութիւնը: Օսմանեան վարիչներուն հակառուս տրամադրութիւնները սրելու քաղաքական նպատակին կը ծառայեն եւրոպական մամուլի կարգ մը օրկաններուն հաղորդումները: Աւստրիական Փելշէր Լոյտ թերթը կը գրէ թէ Ռուսիա կը սպառնայ զօրք մտցնել հայկական նահանգներ՝ եթէ Թուրքիա չընդունի պալքանեան իր դաշնակիցներուն պայմանները¹⁰⁴: Գերմանական Պերլինէր թակեպլայթ թերթը կը գրէ թէ Հայաստան Թուրքիոյ խոցելի կէտը կը կազմէ եւ Ռուսիա հայկական բարեկարգութիւնները պատրուակելով կրնայ հոն զօրք մտցնել, ուստի, այս հարցով Թուրքիա պէտք է գործակցի եւրոպական երկիրներուն հետ, որոնք այլապէս ալ, Պերլինի Պայմանագրով, այդ կապակցութեամբ պատասխանատուութիւն ստանձնած են¹⁰⁵: Ռուսական Նովոյէ Վրեմյա թերթը կը գրէ թէ ասիական Թուրքիան Ռուսիոյ համար առեւտրական հրապարակ մը չէ միայն. այն Ռուսիոյ հարաւն է, «այն հարաւը, որուն այնքան բուռն կերպով, ճակատագրականօրէն կը փափաքի ռուսը: Մենք արդէն մտեր ենք Փոքր Ասիոյ թերակղզին: Երեսունհինգ տարի առաջ ռուս զինուորները արդէն գրաւեցին ասիական Թուրքիոյ հիւսիսային պատուարը - Կարսը, եւ մեր սահմանը հասաւ մինչեւ Եփրատի ափունքը»¹⁰⁶: Թանին կը յարձակի վերոյիշեալ յօդուածը թարգմանաբար տուած Ազատամարտին վրայ, գտնելով թէ այս յօդուածը տպողները «պէտք չէ տարակոյս ունենան որ օսմանեան հայրենիքին մէջ եղբայրութեան հաստատման գործին ամենէն գէշ ծառայութիւնը կը մատուցեն»¹⁰⁷: Ժէօն Թուրք, ծաղրելու համար հայերուն ռուսասիրութիւնը, կը տպագրէ ծաղրանկար մը, ուր կը պատկերուի ցարը կախաղանի մը քով կեցած՝ ուզելով ցոյց տալ թէ ռուսերուն ապաւինիլ փափաքող հայերուն ինչ կը սպասէ¹⁰⁸: Սա նաեւ անուղղակի ակնարկ մըն էր 1907-1912ին Ռուսիոյ տարածքին ՀՅԴԻ եւ այլ քաղաքական հայ հոսանքներու դէմ տեղի ունեցող հալածանքներուն: (Այս ծաղրանկարին պատճառով Ժէօն Թուրք կը կախակայուի եւ կը սկսի լոյս տեսնել Union անունով): Ազատամարտ կը գրէ թէ Ժէօն Թուրք պէտք չունէր օտար կախաղանով սպառնալ հայերուն, երբ մահուան սպառնալիքը թրքահայուն ամէնօրեայ իրականութեան մաս կը կազմէ¹⁰⁹:

Պալքանեան Պատերազմի ընթացքին եւ անկէ ետք բարձրացած հայկական նահանգներու բարեկարգութեան հարցով մեծ հետաքրքրութիւն ցոյց կու տայ եւրոպական հանրային կարծիքը: Հարցին մասին լսումներ կ'ունենան Անգլիոյ, Իտալիոյ եւ Ռուսիոյ երեսփոխանական

ժողովները¹¹⁰։ Այդ մասին լայնօրէն կ'անրադառնայ եւ օսմանեան իշխանութիւններուն հասցէին սուր քննադատութիւններ կը կատարէ եւրոպական մամուլը։ Օրինակի համար *La Revue du Deux Mondes* հանդէսին մէջ Ռընէ Փինոն «Ասիական Թուրքիոյ Վերակազմութիւնը» յօդուածին մէջ կը քննադատէ սուտի եւ կեղծիքի յենած Իթիհատի ձախող քաղաքականութիւնը ու կը գրէ. «Երիտթուրքերը պետք է ընդունին բարեկարգումներն ու ապակեդրոնացումը, եթէ չեն ուզեր ինքնասպանութիւն գործել»¹¹¹։ Օտար մամուլի այսօրինակ գրութիւնները եւ պոլսահայ մամուլին կողմէ անոնց թարգմանութիւնը (Ազատամարտ եւ Արեւելք ունէին նաեւ թրքերէն բաժիններ, ուր որոշ յօդուածներ կը տպուէին նաեւ օսմաներէնով), մեծապէս կը ջղագրգռեն իշխանութիւնները։ 1913 Յունուար 30ին, ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը, «Եւրոպական Մեծ Պետութիւններուն եւ Ժողովուրդներուն» կը յղէ հայկական հարցի մասին իր կեցուածքները պարփակող ընդարձակ կոչ մը¹¹²։ Այդ կոչը եւրոպական մամուլին կողմէ կ'արժանանայ աննախընթաց արձագանգի¹¹³։ Մամլոյ տեսչութեան կողմէ առնուած որոշում մը կ'արգիլէ պետութեան հասցէին «անպատշաճ հրատարակութիւններէն» թարգմանութիւններ կատարել¹¹⁴։ Աւելի ուշ, մամլոյ տեսչութիւնը կը հաղորդէ թէ «հայերէն թերթերէն ոմանք ճշմարտութեան հակառակ հատուածներ կը պարունակեն Անատոլիոյ մէջ գործադրուելիք վարչային բարեկարգումներու եւ կնքուելիք փոխառութեան մասին» եւ օրինական ծանր հետապնդումներու սպառնալիքով զանոնք զգուշութեան կը հրաւիրէ¹¹⁵։

Հակառակ իշխանութիւններուն դժկամութեան եւ ջղագրգիռ վերարբերմունքին, 1913 Յունիս 30ին հայկական նահանգներու բարեկարգութեան հարցով Կ.Պոլսոյ մէջ կը կազմուի Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Ռուսիոյ, Աւստրիա-Հունգարիոյ եւ Իտալիոյ ղեսպանատուներու ներկայացուցիչներէն բաղկացած ղեսպանական յանձնախումբ։ Կառավարութիւնը կ'աճապարէ ներկայացնել իր հայեացքներուն հաշտ բարեկարգութեան ծրագիր մը, որուն կը հակադրուի Գերմանիա-Ռուսիա համատեղ պատրաստուած ծրագրի նախագիծ մը։ Ծայր կ'առնէ բանակցութիւններու եւ ժողովներու շարք մը, որոնց ընթացքին կը քննարկուին այլեւայլ առաջարկութիւններ։ 1914 Ապրիլին հայկական նահանգներու բարեկարգութեան ծրագիրը կը ստանայ իր վերջնական տեսքը, որուն համաձայն հայկական 6 նահանգները կը բաժնուին վարչական երկու միաւորներու, որոնց վրայ վերահսկիչներ կը նշանակուին հոլանտացի Վեստենենկը (Louis Constant Westenenk) եւ նորվեկիացի Հոֆը (Nicolai Hoff)։

Բարեկարգութեան այս ծրագիրը գործադրութեան չի դրուիր՝ վրայ հասած Համաշխարհային Ա. Պատերազմին պատճառով։ Սակայն, թուրք քաղաքական վերնախաւի մտայնութեան մէջ կ'ամրապնդուի այն տե-

սակէտը, որ որեւէ պատերազմի ժամանակ հայկական նահանգներու բարեկարգութեան հարցը կրնայ վերարժածուիլ, առիթ տալով օտար ուժերու՝ ընդհուպ զինուորական միջամտութեան: Ներքին Գործոց նախարար Ռաշիտ պէյ առիթով մը կ'ըսէ. «Պալքաններու եւ յոյներու յաջողութիւնը գլխապտոյտ պատճառած է հայ փոլիթիկոսներուն, որոնք յատկապէս բարեյաջող լոպէ գտան Եւրոպայի ուշադրութիւնը գրաւելու հայոց խնդրոյն վրայ»¹¹⁶: Պալքանեան Թերակղզիի կորուստէն ետք, որեւէ «բարեյաջող լոպէ»ի պարագային Արեւելեան Անատոլիոյ կորուստը եւս կը դառնայ թուրք քաղաքական վերնախաւին մտահոգութիւնը:

* *

Պալքանեան Պատերազմը խորունկ յեղաշրջում յառաջ կը բերէ թուրք քաղաքական մտածողութեան մէջ: Պատերազմը կը փաստէ որ քրիստոնեաները կը մնան անփստահելի տարր եւ օսմանիզմի գաղափարախօսութիւնը անոնց մօտ լուրջ փոփոխութիւն յառաջ բերած չէ: Իրերայաջորդ դէպքերը ցոյց կու տան որ ոչ-թուրք իսլամները եւս անհարազատ են Կայսրութեան: Ալպանացիները կը կռուին պալքանեան զօրակցութեան կողքին, որուն հետեւանքով Լոնտոնի Դաշնագրով քարտէսին վրայ երեւան կու գայ Ալպանիա պետութիւնը: Եմէնի մէջ կը շարունակուի տասնամեակներու վրայ երկարող ապստամբական իրավիճակը. արաբներուն մօտ ազատատենչ ձգտումները օրաւուր կը ստանան նոր թափ: Այս բոլորը ցոյց կու տան որ Կայսրութեան իսլամ ժողովուրդները մնայուն կերպով համախումբ պահելու առումով իսլամիզմի գաղափարախօսութիւնը երաշխիք չէր կրնար ըլլալ: Կը մնար յոյս դնել թուրք տարրին վրայ: Պետական հովանաւորութեամբ կը սկսի զարթօնք ապրիլ թուրք ազգայնամոլութիւնը որ ինքնաբերաբար կը յանգի փանթուրանիզմի գաղափարախօսութեան:

Փանթուրանիզմի գաղափարախօսութիւնը երիտթրքութեան համար նորութիւն մը չէր: Անոր տարրերը առկայ էին երիտթրքական շարժման գաղափարախօսութեան մէջ՝ երբ տակաւին վերջինս իշխանութեան հասած չէր: Սակայն, այդ շրջանին, երիտթրքական շարժումը կը ձգտէր ընդգրկել նաեւ Ապտիւլ Համիտի իշխանութեան դէմ պայքարի ելած բոլոր՝ նաեւ ոչ-թուրք իսլամ ու քրիստոնեայ ուժերը: Ուստի, այդ շրջանին, անոնց համար ձեռնտու չէր յառաջ քաշել փանթուրանիզմի գաղափարախօսութիւնը, որ բնականաբար վանելի պիտի ըլլար ոչ-թուրք տարրին կողմէ: Պալքանեան Պատերազմէն ետք այս մտահոգութիւնը իսպառ փարատած էր, որովհետեւ «ալպանացիները, յոյները, եւ սլաւները դժուար թէ այլեւս տեղի տային. կը մնային միայն հայերն ու արաբները: Երեք բաղկացուցիչները - օսմանականութիւն, իսլամիզմ, ազգայնականութիւն - կը շարունակէին մնալ [օսմանեան վարիչներուն] գաղափարախօսական կարկանդակին բաղադրատոմսի բաղկացու-

ցիչները. [այդ բաղադրատոմսին միայն] համեմատութիւնները փոխուած էին»¹¹⁷ ի շահ ազգայնամոլութեան:

Փանթուրանիզմի գաղափարախօսներէն Թեքին Ալի անդրադառնալէ ետք Պալքանեան Պատերազմի պարտութեան հետեւանքներուն, կը գրէ. «Սակայն թուրքերը պատերազմին միջոցով շահեցան իրենց երազային հայրենիքը, իրենց Թուրանը՝ իրենց ազգին բնօրրանն ու ցեղին բոյնը: Ուշագրաւ շրջադարձով մը թուրք ազգը իր հայեացքը դարձուց կորստուած տարածքներէն՝ Սալոնիկէն, Իսթիւփէն, Մոնաստիրէն եւ Իոնիանայէն եւ սկսաւ նայիլ դէպի Թուրան՝ ապագայի երազային հայրենիքը»¹¹⁸: Զարեանդի պատկերաւոր արտայայտութեամբ ալ «Պալքանեան պատերազմը, այսպէս, հանդիսացեր էր այն պատմական դարձակետը, ուր թուրքերը կը լքէին Զուրանը եւ անոր տեղ կ'ընդունէին Թուրանը»¹¹⁹:

Յաջորդող քանի մը տարիներուն փանթուրանիզմի գաղափարախօսութիւնը կ'աճի եւ իր ուրոյն տեղը կը գրաւէ Թուրք քաղաքական մտածողութեան մէջ: Համաշխարհային Ա. Պատերազմը եւ մասնաւորապէս ռուսական յեղափոխութիւնը մեծ հնարաւորութիւն կը ստեղծեն նախ՝ Թուրքիան թրքացնելու եւ ապա՝ փանթուրանիզմի երազները իրականացնելու համար:

Զոյգ հնարաւորութիւններն ալ հայ ժողովուրդին համար կ'ըլլան աղէտային:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Justin McCarthy, *The Ottoman Peoples and the End of Empire*, London, Oxford, 2001, էջ 89: Ակնարկուած պատերազմական տասնամեայ ժամանակաշրջանը կ'աւարտի Մուսթաֆա Բեմալի յոյներուն դէմ տարած յաղթանակով՝ 1922ին, եւ նոյն տարուան աւարտին անգլիական զօրքին հետ կնքուած Մուտանիայի զինադադարով:

² Այս եւ յետագայ բոլոր թուականները տրուած են գրիգորեան նոր տոմարով:

³ Ազատամարտ, 1911, Սեպտ. 18/1 Հոկտ.:

⁴ Ազատամարտ, 1911, Սեպտ. 22/5 Հոկտ.:

⁵ Նոր Աշխարհ, 1912, Մարտ 31/13 Ապրիլ:

⁶ Ազատամարտ, 1911, Հոկտ. 23/5 Նոյ.:

⁷ Ազատամարտ, 1911, 3/16 Նոյ.:

⁸ Ազատամարտ, 1912, 13/26 Մարտ:

⁹ Recep Karacakaya, *A Chronology of the Armenian Problem with a Bibliography (1878-1923)*, Publication of the Prime Ministry General Directorate of State Archives of the Republic of Turkey, Ankara, 2002, էջ 83:

¹⁰ Նոյն, էջ 84:

¹¹ Նոյն, էջ 85:

¹² Նոյն, էջ 86:

¹³ Ազատամարտ, 1911, Սեպտ. 22/5 Հոկտ.:

¹⁴ Ազատամարտ, 1911, Նոյ. 29/12 Հոկտ.:

¹⁵ Ազատամարտ, 1911, 8/21 Դեկտ.:

- ¹⁶ 1912ի Օսմանեան Երեսփոխանական լիտուրգիաներուն մասին տե՛ս՝ Ե. Ճէրէճեան «1912ի Օսմանեան Երեսփոխանական Լիտուրգիաները եւ Արեւմտահայութիւնը», Հայկազեան Հայագիտական Հանգէս, Ի. Է. հատոր, Պէյրութ, 2007, էջ 103-160:
- ¹⁷ Նոր Աշխարհ, 1912, 1/14 Ապրիլ
- ¹⁸ Այս մասին աւելի մանրամասն՝ Ճէրէճեան, «1912ի Օսմանեան», էջ 14 եւ ծանօթ. 36:
- ¹⁹ Նոր Աշխարհ, 1912, 3/16 Ապրիլ:
- ²⁰ Պերլինի Դաշնագրի 23րդ յօդուածը կը նշէ. «Բարձր Դուռը պարտաւորում է Կրետէ կղզում բարեխղճօրէն մտցնել 1868 թուականի կազմակերպական կանոնադրութիւնը (1868 թ.ի Յունուար 10ին սուլթանական ֆերմանով Կրետէ կղզում մտցում էր կազմակերպական ստատուս, ըստ որի Կրետացիներին տրուում էր վարչական մասնակի ինքնավարութիւն: Փաստօրէն Բ. Դուռը չէր կատարում այդ ֆերմանը), այն փոփոխութիւններով, որոնք կը ճանաչուէին արդարացի: Տեղական կարիքներին յարմարուած նմանօրինակ կանոնադրութիւններ, սակայն, նրանցից ի բաց առեալ Կրետէին տրուած արտօնութիւններն ու առանձնաշնորհումները, կը մտցուէին նաեւ Եւրոպական Թուրքիայի միւս մասերում, որոնց համար սոյն պայմանագրով չէր նախատեսուել վարչական յատուկ կարգաւորում: Այդ նոր կանոնադրութիւնների մանրամասների մշակումը Բ. Դուռը իւրաքանչիւր մարզում կը յանձնարարի յատուկ յանձնաժողովների, որոնց մէջ տեղացի բնակչութիւնը կը ստանայ լայն մասնակցութիւն: Այդ աշխատանքների արդիւնքը հանդիսացող կազմակերպութիւնների նախագծերը կը ներկայացուէին Բ. Դրան քննարկմանը: Նախքան այն կարգադրութիւնների հրապարակումը, որոնցով նախագծերը կը մտցուէին գործողութեան մէջ, Բ. Դուռը կը խորհրդակցի Արեւելեան Ռումելիայի համար նշանակուած եւրոպական յանձնաժողովի հետ» (Ջ. Կիրակոսեան եւ Ռ. Սահակեան, Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Մովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1972, էջ 115-116):
- Ռումելիի Պայմանագիրը մեծ տէրութիւններու ներկայացուցիչներուն կողմէ կը ծանուցուի 1880 Յուլիս 5ին: Այդ ծանուցագրին մէջ կը նշուի նաեւ Պերլինի Պայմանագրի 61րդ յօդուածին գործադրութիւնը, որովհետեւ «պետութիւններու ներկայացուցիչներուն կողմէ ներկայացուած բոլոր տեղեկագիրները ցոյց կու տան որ հայկական նահանգներուն մէջ վիճակը ողբալի է» (Ազատամարտ, 1912 Սեպտ. 24/7 Հոկտ.):
- ²¹ Ազատամարտ, 1912, Սեպտ. 21/4 Հոկտ.: ՀՅԴ կազմակերպչական կառույցին նուիրուած աշխատութիւններուն մէջ, մենք «պատշաճ մարմին» հասկացութեան մասին բացատրութիւններ չգտանք:
- ²² Ազատամարտ, 1912, Սեպտ. 22/5 Հոկտ.:
- ²³ Handan Nezir Akmeshe, *The Birth of Modern Turkey*, London, I.B. Tauris, 2005, էջ 127:
- ²⁴ Նոր Աշխարհ, 1912, Սեպտ. 22/5 Հոկտ.:
- ²⁵ Նոր Աշխարհ, 1912, Սեպտ. 19/2 Հոկտ.:
- ²⁶ Ազատամարտ, 1912, Սեպտ. 25/5 Հոկտ.:
- ²⁷ Feroz Ahmed, *The Young Turks*, Oxford, 1969, էջ 112:
- ²⁸ Paul Dumont "A Jewish, Socialist and Ottoman Organization: the Worker's Federation of Salonica" էջ 72-73, 183; Mete Tuncay, Erik J. Zürcher, *Socialism and Nationalism in the Ottoman Empire 1876-1923*, London, British Academic Press in association with The International Institute of Social History (Amsterdam), 1994:
- ²⁹ Ազատամարտ, 1912, Սեպտ. 30/13 Հոկտ.:
- ³⁰ Ազատամարտ, 1912, Հոկտ. 23/5 Նոյ.:
- ³¹ Ազատամարտ, 1912, Նոյ. 6/19:
- ³² Ազգակ (Ազատամարտ) 1913, Յունուար 12/25:
- ³³ Ազատամարտ, 1913, Յունուար 20/2 Փետր.:
- ³⁴ Ազատամարտ, 1913, Յունուար 23/5 Փետր.:

- ³⁵ Ազատամարտ, 1913, Յունուար 23/5 Փետր.:
- ³⁶ Հնչակ, 1913, Մարտ:
- ³⁷ Ստեփան Սապահ-Գիւլեան, Պատասխանատուները, Բ. տիպ., Պէյրուս, Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, 1974, էջ 23:
- ³⁸ Ազատամարտ, 1912, Սեպտ. 29/12 Հոկտ.:
- ³⁹ Ազատամարտ, 1913, Յուլիս 3/16:
- ⁴⁰ Christopher J. Walker, *ARMENIA- The Survival of a Nation*, New York, St. Martin's Press, 1990, էջ 193:
- ⁴¹ Արամ Անտոնեան, Պատկերազարդ Ընդարձակ Պատմութիւն Պաշտօնեան Պատերազմին, Կ.Պոլիս, 1912, էջ 442:
- ⁴² Ազատամարտ, 1913, Յունուար 22/4 Փետր.:
- Ծին Թորոս, համիտեան շրջանին, որպէս հնչակեան ֆետայի կը մասնակցի Կիլիկիոյ շրջանի ազգային-ազատագրական շարժումներուն: Սահմանադրութենէն ետք, ան կը նշանակուի Սիսէն ոտքով 6 ժամ դէպի արեւելք գտնուող Կարսպագար թրքաբնակ գիւղաքաղաքին ոստիկանութեան անդամ: Ատանայի աղէտին ժամանակ, իր պաշտօնին բերումով, նախապէս կ'իմանայ գալիք վտանգը եւ յաջողութեամբ կը կազմակերպէ ու կը զխաւորէ Կարսպագարի հայութեան ինքնապաշտպանութիւնը (Կարսպագարի մէջ բնակութիւն հաստատած էին շուրջ 1000 հայեր, մեծ մասամբ Հաճընէն եւ Մարաշէն): Ատանայի աղէտէն յետոյ պաշտօնէն ազատ կ'արձակուի ու կը վարէ թափառական կեանք: Իրեն կը միանան բանակային ծառայութենէն խուսափած 5-6 հայ երիտասարդներ, որոնք հրոսակախումը կազմած կը թափառին Հաճնոյ եւ Զէյթունի լեռներուն վրայ: 1913 Յունուարին, խումբը բանակային ստորաբաժանումի մը կողմէ կը պաշարուի Հաճնոյ այրիանոցին մէջ: (Այրիանոցը կառուցուած էր Ատանայի աղէտէն ետք եւ աշխատանք ու կեցութիւն կ'ապահովէր աղէտին զոհ գացածներու այրի կանանց): Տեղի կ'ունենայ փոխհրաձգութիւն, որուն ընթացքին խումբին մեծ մասը, ներառեալ Ծին Թորոս կը նահատակուի: մնացեալը կը ձերբակալուի: Այս միջոցին այրիանոցը կը հրկիզուի: Կառավարութիւնը այդ հրկիզումը կը վերագրէ փախստականներուն՝ բան մը որ ամբողջապէս անտրամաբանական էր: Կ.Պոլսոյ Պատրիարքութեան հետապնդումներուն շնորհիւ, կառավարութիւնը առանց ընդունելու իր պատասխանատուութիւնը, որպէս «նուիրատուութիւն» 1000 օսմ. ոսկիով կը մասնակցի այրիանոցի վերաշինութեան (Յ. Պ. Պօղոսեան, Հաճընի Ընդհանուր Պատմութիւն, Լոս Անճելըս, Հրտ.՝ Հաճընի Հայրենակցական Վերաշինաց Միութեան, ԱՄՆ, 1942, էջ 580-583. նաեւ՝ Յ. Յ. Թերզեան, Կիլիկիոյ Աղէտը, Պէյրուս, Մատենաշար Այգի (Ա. տպգրթ. 1912, Կ.Պոլիս) 1964, էջ 213-217. նաեւ՝ Ազատամարտ, 1913, Յունուար 22/4 Փետր. եւ Մայիս 2 15):
- ⁴³ Ազատամարտ, 1913, Յունուար 23/5 Փետր.:
- ⁴⁴ Ազատամարտ, 1913, Փետր. 2/15:
- ⁴⁵ Ազատամարտ, 1913, Յունուար 29/11 Փետր.:
- ⁴⁶ Ազատամարտ, 1913, Փետր. 4/17:
- ⁴⁷ Ազատամարտ, 1913, Փետր. 13/26:
- ⁴⁸ Ազատամարտ, 1913, Փետր. 14/27:
- ⁴⁹ Ազատամարտ, 1913, Յուլիս 14/27:
- ⁵⁰ Ahmed, էջ 152:
- ⁵¹ Անտրէ Մանտելթամ, Երիտասարդ Թուրքերը Պատերազմէն Առաջ, Կ.Պոլիս, Ազգային-Քաղաքական Մատենաշար Թիւ 6, 1919, էջ 93-94:
- ⁵² Գէորգ Ղարիբջանեան, Ակնարկներ Հայ-Բուլղարական Բարեկամութեան Պատմութեան, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1989, էջ 114:
- ⁵³ Dikran Kaligian, "The Armenian Revolutionary Federation Under Ottoman Rule, 1908-1914" (dissertation for the degree of doctor of philosophy), Boston College, 2003, էջ 235:

- ⁵⁴ Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Նոյ. 21/4 Դեկտ.:
- ⁵⁵ Հայկական կամաւորական ջոկատի գործունէութեան մասին տե՛ս՝ Հայ Ժողովրդի Պատմութիւն, հտր. 6, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Պատմութեան ինստիտուտ, 1981, էջ 670-673. նաեւ՝ Մ. Պ. Աղայեան, Հայ Ժողովրդի Ազատագրական Պայքարի Պատմութիւնից, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 297-323. նաեւ՝ Հ. Սիմոնեան, Անդրա-նիկի ժամանակը, հտր. 2, Երեւան, «ԿԱԻՍԱ», 1996, էջ 342-365. նաեւ՝ Ա. Չելեպեան, Զօր. Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական Շարժումը, Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, 1986, էջ 263-269. նաեւ՝ Ղարիբջանեան, Անհարկներ էջ 105-125. նաեւ՝ Կ. Գէորգեան, «Վերլիշումներ Պալքանեան Պատերազմի Երեսմեակին Առ-թիւ», Ամէնուն Տարեգիրքը, Պէյրութ, 1962, Թ. տարի:
- ⁵⁶ Ազատամարտ, 1912, Սեպտ. 15/28:
- ⁵⁷ Ազատամարտ, 1912, Սեպտ. 19/1 Հոկտ.:
- ⁵⁸ Հնչակ, 1913 Մարտ:
- ⁵⁹ Ազատամարտ, 1913, Մարտ 2/15:
- ⁶⁰ Ազատամարտ, 1913, Ապրիլ 30/13 Մայիս:
- ⁶¹ Ազատամարտ, 1913, Մայիս 1/14:
- ⁶² Նոյն:
- ⁶³ Նոյն:
- ⁶⁴ Ազատամարտ, 1913, Մայիս 2/15 եւ Մայիս 3/16:
- ⁶⁵ Ազատամարտ, 1913, Մայիս 9/22:
- ⁶⁶ Ազատամարտ, 1913, Մայիս 22/4 Յունիս:
- ⁶⁷ Ազատամարտ, 1913, Մայիս 24/6 Յունիս:
- ⁶⁸ Ազատամարտ, 1913, Մայիս 2/15:
- ⁶⁹ Ծանթ (Ազատամարտ) 1913, Յունիս 16/29:
- ⁷⁰ Նոյն:
- ⁷¹ Ծանթ (Ազատամարտ) 1913 Օգոստ. 27/9 Սեպտ.:
- ⁷² Ազատամարտ, 1913, Նոյ. 26/9 Դեկտ.:
- ⁷³ Ազատամարտ, 1913, Նոյ. 29/12 Դեկտ.:
- ⁷⁴ Ազատամարտ, 1913, Յունիս 19/2 Յուլիս:
- ⁷⁵ Նոր Աշխարհ, 1912, Սեպտ. 9/22:
- ⁷⁶ Ազատամարտ, 1912, Սեպտ. 16/29:
- ⁷⁷ Նոր Աշխարհ, 1912, Սեպտ. 14/27:
- ⁷⁸ Նոր Աշխարհ, 1912, Սեպտ. 15/28:
- ⁷⁹ Ազատամարտ, 1912, Սեպտ. 19/1 Հոկտ.:
- ⁸⁰ Ազատամարտ, 1911, Սեպտ. 20/2 Հոկտ.:
- ⁸¹ Ազատ Համբարեան, Երիտթուրքերի Ազգային եւ Հողային Քաղաքականութիւնը եւ Ազատագրական Շարժումները Արեւմտեան Հայաստանում (1908-1914), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Պատմութեան ինստիտուտ, 1979, էջ 175:
- ⁸² Ազատամարտ, 1913, Օգոստ. 28/10 Սեպտ.:
- ⁸³ Խոսրով Թիւթիւնճեան, Անմահներու Հետ Վասպուրական Մեր Աշխարհին Մէջ, Պէյրութ, Տպ. Սեւան, 1974, էջ 134-145, նաեւ՝ Հնչակ, 1914 Մայիս:
- ⁸⁴ Ծանթ (Ազատամարտ) 1913, Սեպտ. 4/17:
- ⁸⁵ Մեղու (Ազատամարտ) 1913, Յունիս 14/27:
- ⁸⁶ Ծանթ (Ազատամարտ) 1913, Յունիս 20/5 Օգոստ.:
- ⁸⁷ Անդրադառնալով այս ժամանակաշրջանին, ՀԵԴԻ յայտնի պատմագիրներէն Հրաչ Տասնապետեան կը գրէ. “In short, the Dashnaktsutian thus associated itself with the concept of “ottomanism” (Dasnabedian H., History of the Armenian Revolutionary Federation Dashnaktsutian (1890-1924), 1989, Milan, էջ 87): 1910ին, Ժընեւի մէջ, ՀԵԴԻ հրատարակութեամբ լոյս կը տեսնէ Դաշնակցութեան յայտնի գաղափարախօսներէն

- Միքայել Վարանդեանի Վերածնունդ Հայրենիքի եւ Մեր Դերը գիրքը, ուր «Հայրենիք» հասկացութեան տակ ամբողջապէս կ'ըմբռնուէր Օսմանեան Կայսրութիւնը:
- ⁸⁸ Բիւթանիա (Ազատամարտ) 1912, Նոյ. 10/23:
- ⁸⁹ Ազատամարտ, 1912, Սեպտ. 29/12 Հոկտ.:
- ⁹⁰ Նոյն:
- ⁹¹ Ազատամարտ, 1912, Սեպտ. 30/13 Հոկտ.:
- ⁹² Ազատամարտ, 1912, Հոկտ. 1/14:
- ⁹³ Սալահ-Գիւլեան, Պատասխանատուները, էջ 152-159:
- ⁹⁴ Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Դեկտ. 4/17:
- ⁹⁵ Նոյն:
- ⁹⁶ Ազատամարտ, 1913, Փետր. 24/9 Մարտ:
- ⁹⁷ Հնչակ, 1913, Յունուար:
- ⁹⁸ Ազատամարտ, 1913, Սեպտ. 10/23:
- ⁹⁹ Առաջամարտ, 1913, Յուլիս 2/15:
- ¹⁰⁰ Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Դեկտ. 5/18:
- ¹⁰¹ Ազատամարտ, 1913, Նոյ. 13/26:
- ¹⁰² Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Դեկտ. 5/18:
- ¹⁰³ Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Դեկտ. 6/19:
- ¹⁰⁴ Ազատամարտ, 1913, Յունուար 3/16:
- ¹⁰⁵ Շանթ (Ազատամարտ) 1913, Սեպտ. 5/18:
- ¹⁰⁶ Ազատամարտ, 1913, Մայիս 28/10 Յունիս: Այստեղ խօսքը կ'ը վերաբերի 1877-1878ի ռուս-թրքական պատերազմին:
- ¹⁰⁷ Ազատամարտ, 1913, Մայիս 30/12 Յունիս:
- ¹⁰⁸ Ազատամարտ, 1913, Յունիս 2/15:
- ¹⁰⁹ Նոյն:
- ¹¹⁰ Ազատամարտ, 1913, Ապրիլ 7/20, Մայիս 18/31, Մայիս 21/3 Յունիս, Յունիս 14/27:
- ¹¹¹ Ազատամարտ, 1913, Օգոստ. 25/7 Սեպտ.:
- ¹¹² Արսէն Կիտուր, Պատմութիւն ՄԴ Հնչակեան Կուսակցութեան, Ա. հտր., Պէյրութ, Շիրակ Հրատարակչատուն, 1962, էջ 352-358:
- ¹¹³ Հնչակ, 1913 Փետր., 1913 Մարտ, 1913 Ապրիլ-Մայիս, 1914 Մայիս:
- ¹¹⁴ Ազատամարտ, 1913, Մայիս 9/22:
- ¹¹⁵ Ազատամարտ, 1913, Նոյ. 6/19:
- ¹¹⁶ Զոն Կիրակոսեան, Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանին Առաջ, Ա. հտր., Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1982, էջ 286:
- ¹¹⁷ Ahmed, էջ 154:
- ¹¹⁸ Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal*, Liberty Press, London, էջ 19:
- ¹¹⁹ Զարեանդ, Միացեալ Անկախ Թուրանիա, Աթէնք, «Յեղափոխական Գրադարան» Թիւ 2, 1988, էջ 96:

THE ARMENIANS OF THE OTTOMAN EMPIRE
AND
THE TRIPOLITANIAN AND BALKAN WARS
(Summary)

YEGHIG DJEREDJIAN

Right before the outbreak of WWI the Ottoman Empire fought two wars, the Tripolitanian War in 1911 and the Balkan War in 1912-13. These wars caused the Empire the loss of large territories.

For the first time Armenian citizens of the Ottoman Empire participated in these wars as they were conscripted into the Ottoman army. Indeed, prior to the Constitution of 1908 Christians were not entitled to join the Ottoman army.

The Ottoman Armenians reacted to these two wars; they had specific views regarding their causes and related issues.

The author analyzes these views and stances by highlighting the declarations of the Armenian Patriarchate of Constantinople, the Armenian Revolutionary Federation and the Social Democrat Hunchagian Party. These had a dominant presence in Western Armenian public life.

The Balkan Wars reaffirmed the necessity of implementing reforms in the Ottoman Empire under international supervision. Reforms had been the demand of the Western Armenians from the time of the Berlin Conference of 1878.

During these two wars the Western Armenians generally, faithfully served in the Ottoman army and contributed to efforts and acts that aimed at enhancing the army's morale and strengthening it. However, during the Balkan War Armenian views were not uniform. Some Armenian volunteers fought in the Bulgarian army as a separate squad.

The author notes that both these wars impacted on Turkish political mentality, which underwent a significant change, replacing Ottomanism with Turkish nationalism.

